

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Մասնակցինք Սուրիահայութեան Ի Նպաստ Թլերոնին

Մօտ օրէն կ'ամբողջանայ Սուրիոյ քաղաքացիական պատերազմի հիմնգերոյ տարին եւ առայժմ հորիզոնի վրայ չկան տագնապի մօտալուտ լուծման հեռանկարներ:

Հարիւր հազարաւորներ գոհր գացին դաժան պատերազմին: Միլիոնաւորներ տեղահան եղան իրենց գիւղերէն, քաղաքներէն եւ բնակարաններէն՝ անօթեւան ապրելով դրացի երկիրներուն մէջ:

Այս քոլորէն բնականաբար չէր կրնար գերծ մնալ նաեւ սուրիահայութիւնը: Մայրաքաղաք Դամասկոսի հայութիւնը առայժմ կը գտնուի համեմատաբար ապահով պայմաններու մէջ: Նոյնը կարելի չէ ըսել Հալէպի մասին: Նախապատերազմական շրջանի 60 հազար հայութենէն մնացած է մէկ երրորդը: Երբեմնի աշխոյժ հայ գաղութը կը գտնուի գոյութիւնը պահելու վտանգին առջեւ:

Քաղաքացիական պատերազմի առաջին օրերուն, Ամենայն Հայոց Գարեգիւն Բ-ի եւ Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.-ի միացեալ կոչին ընդառայելով, Լոս Անճելըսը եղաւ առաջինը, ուր ձեռնուղ առաւ Սուրիահայութեան Օժանդակութեան Մարմին մը, ծանօթ «ՍԱՐՖ» անունով, որ իր մէջ կը համախմբէ հայութեան քոլոր հատուածները:

Անցնող տարիներուն այս կազմակերպութիւնը կարողացաւ օժանդակութեան ձեռք երկարել կարօտեալներուն, դպրոցական եւ ազգային մեր հաստատութիւններուն, այդպիսով մասամբ քթեցնելով պատերազմի արհաւիրքը:

Այս Կիրակի, Փետրուար 21-ին, Կ.Տ ժամը 2-8, տեղի պիտի ունենայ վեցժամեայ թելեթոն-նուիրահաւաք մը, որ պիտի սփռուի Լոս Անճելըսի մէջ գործող հեռա-տեսիլի շարք մը ալիքներով եւ հանգանակուած ամբողջ գումարը պիտի յատկացուի սուրիահայութեան կարիքներուն:

Հալէպը եղած է եղեռնէն ետք ծնունդ առած եւ կազմակերպուած սփիւռքի առաջին հայ գաղութը, որոյ շնորհիւ ան արժանացած է «Մայր Գաղութ» կոչումին: Մեծ եղած է հալէպահայութեան դերը ազգապահպանման եւ հայ մշակոյթի տարածման գործին մէջ: Հալէպահայ մտաւորականներ նպաստած են Միջին արեւելի եւ նոյնիսկ Միացեալ Նահանգներու հայ գաղութներէն ներս մեր ազգային կառոյցները կանգուն պահելու գործին:

Ինչպէս որ իրաւանցիւր անհատ կը հասնի իր մօրը, այդպէս ալ մենք հաւաքաբար պարտաւոր ենք օգնութեան հասնիլ «Մայր Գաղութին»:

Բոլորս մասնակցիմք դրամահաւաքին:

«ՄԱՍԻՍ»

Սերժ Սարգսեան Յոյս Յայտնեց Որ, Սահմանադրական Փոփոխութիւններով Հայաստանի Քաղաքական Համակարգը Կը Դառնայ Առաւել Բաց



Սերժ Սարգսեան ելոյթ կ'ունենայ իշխանական վերնախաւին առջեւ

Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանը անցեալ շաբաթ իր նստավայրէն ներս հիւրընկալած է օրէնադիր, գործադիր եւ դատական իշխանութիւններու, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններու ղեկավար կազմի ներկայացուցիչները: Այս առթիւ իր ունեցած ելոյթին մէջ Սարգսեան խօսած է սահմանադրութեան փոփոխութիւններու կենսագործման մասին, անդրադարձ կատարելով Հայաստանի տնտեսական, արտաքին եւ

ներքին քաղաքական խնդիրներուն:

«Սահմանադրական փոփոխութիւնները հերթական՝ այս կամ այն կառուցի կողմից պարտադրուած կամ որեւէ կառուցի անդամագրուելով պայմանաւորուած կամ էլ ինչ-որ մասնաւոր հարցեր լուծելուն միտուած փոփոխութիւններ չեն: Դրանք մեր առջեւ ծառայած մարտահրաւէրներ են, մեր քաղաքական կեանքը, մեր իրականութեան խնդիրները հաշուի

Շաբ.ը էջ 4

Ռուսաստան Կը Հակադարձ Դաւութողուի «Պէտք է Հասկնալ, Որ Օսմանեան Կայսրութիւնը Շատոնց Արդէն Գոյութիւն Չունի»

Թուրքիոյ վարչապետ Ահմեթ Դաւութողլու Քիլեի մէջ, մամուլի ասուլիսի մը ընթացքին հաւասարակէս մեղադրեց Ռուսաստանին եւ Հայաստանի՝ «Ատրպէյճանի հողային ամբողջականութիւնը վտանգելու» մէջ:

«Մոսկուան եւ Երեւանը իսկական վտանգ կը հանդիսանան Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան համար: «Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը վտանգուած է այն աջակցութեան պատճառով, որ Հայաստանին կը տրամադրէ Ռուսաստանի Դաշնութիւնը», - յայտարարած է Դաւութողլու, պնդելով, որ վերջին տարիներուն Մոսկուան արդէն իսկ նպատակաւորաբար կը կերպով «մասնատած է տարածաշրջանի պետութիւններէն մի քանին»:

«Ռուսաստանը խախտած է երեք պետութիւններու տարածքային ամբողջականութիւնը: Անոնք են Ուքրաինան, Սուրիան եւ Վրաստանը», - ըսած է Թուրքիոյ վարչապետը:

Մոսկուայի արձագանքը, այս յայտարարութիւններուն չուշացաւ:

Ռուսաստանի արտաքին գործերու նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հանդէս եկաւ կոշտ յայտարարութեամբ մը:

«Ռուսաստանը եւ Ատրպէյճանը փոխադարձ յարգանքի վրայ հիմնուած բարեկամական, գործընկերային յարաբերութիւններ կը կառուցեն: Թուրքիոյ չի յաջողիր Ատրպէյճանի եւ Ռուսաստանի միջեւ սեպ խրել»:

«Դաւութողլուն ի վերջոյ պէտք է հասկնայ, որ Օսմանեան կայսրութիւնը շատոնց արդէն գոյութիւն չունի: Տարածաշրջանին մէջ մէկ պետութեան գերիշխանութիւնը այլեւս անհնարին է, քանի որ չի համապատասխաներ այն սկզբունքներուն, որոնցմով կ'առաջնորդուի ժամանակակից աշխարհը: Բայց եթէ Անգարան որոշած է ստանձնել նոր Օսմանեան կայսրութեան դերակատարութիւնը, ապա պէտք է չի շեցնել, որ այն տարիներուն տարածքային այդ կազմաւորումը «Եւրոպայի հիւանդ մարդը» անուանումը ստացած էր», - եզրակացուցած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչը:

Կաթոլիկ Եկեղեցին Կոչ Կ'ընէ Թուրք Քետազօտողներուն Օգտուելու Վատիկանի Փաստաթուղթերն

Թուրքիոյ եւ Վատիկանի միջեւ յարաբերութիւններու ջերմացում սկսած է նկատուիլ՝ վերջին շրջանին:

Անցեալ շաբաթ Սուրբ Աթոռը հանդէս եկաւ յատուկ յայտարարութեամբ մը, Հայոց ցեղասպանութիւնը անուանելով «1915 թուականի ողբերգական իրադարձութիւններ»: Նաեւ՝ դատապարտեց «հայկական զինուած խումբերու կողմէ Վատիկանի մէջ Թուրքիոյ դեսպանի շուրջ 40 տարի առաջ կատարուած սպանութիւնը»:

Այժմ Կաթոլիկ եկեղեցին հանդէս եկած է նոր նախաձեռնութեամբ մը: Սուրբ Աթոռի գլխաւոր գրադարանավար եւ գաղտնի արխիւի տնօրէն արքեպիսկոպոս Ժան Լուի Բրիւզէ Իսթանպուլ կատարած այցելութեան իր ընթացքին, Թուրք հետազօտողներուն կոչ ըրած է ակտիւօրէն օգտուիլ Վատիկանի մօտ պահուած փաստաթուղթերէն, գիրքերէն եւ ձեռագիրներէն:

Թուրքիոյ պաշտօնական «Անատոլու» գործակալութեան փոխանցած տեղեկութիւններուն համաձայն, Վատիկանի բարձրաստիճան ներկայացուցիչը Պոլիս ժամանած էր «Միմար Սինան» համալսարանի հրահանգով՝ գիտաժողովի մը մասնակցելու նպատակով:

«2015 թուականին յիսուն երկիրներէ շուրջ 1200 հետազօտողներ օգտուած են Վատիկանի արխիւներէն: Անոնց մէջ Թուրքիայէն եկած գիտնականները առաջինն են: Ես սակայն չուսով եմ, որ իմ այցնէն յետոյ Վատիկանի արխիւներուն մէջ աշխատող Թուրք հետազօտողներու թիւը կ'աճի»- յայտարարած է բարձրաստիճան կաթոլիկ հոգեւորականը՝ յիշեցնելով, որ այժմ Սուրբ Աթոռի արխիւներուն մէջ կան շուրջ 80 հազար ձեռագրեր եւ աւելի քան 9000 կտոր հագուածքայ գիրքեր:

Սուրբ Աթոռի արխիւի ղեկավար Ժան Լուի Բրիւզէի այս յայտարարութիւններուն զուգահեռ, Վատիկանի մէջ լուրեր սկսած են շրջանառուիլ՝ Կաթոլիկ եկեղեցոյ հովուապետի Հարաւային Կովկաս կատարելիք շառաշիկայ այցի մասին: Իրագեկ շրջանակներ «ԹԱՍՍ» մամուլի գործակալութեան յայտնած են, որ Ֆրանցիսկոս Պապը այս տարուայ Սեպտեմբերին կը պատրաստուի այցելել Հայաստան, ինչպէս նաեւ Ատրպէյճան եւ Վրաստան:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ժամանակը Կարող է Չբաւականացնել

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՅԵԱՆ

Հայաստանի իշխանութեան մարմինների ղեկավար կազմի հաւաքի ժամանակ իր ելույթում Սերժ Սարգսեանը ներկայացրել է այն Հայաստանի տեսլականը, որը ցանկանում են բոլորը: Ինքնիշխան, ամուր պետութիւն, ժողովրդավարական ազատութիւններ ու իրաւունքներ, հաւասար մրցակցային հնարաւորութիւններ, արտօնեալների բացառում, արդարադատութիւն, կոռուպցիայի ու հովանաւորութեան բացառում, տաղանդաւոր մարդկանց ներգրաւում եւ այլն:

Գաղտնիք չէ, որ այսօր Հայաստանում լիովին հակառակ պատկերն է: Ընդ որում, իրավիճակը հասցուած է «կատարելութեան», նկատի առնելով այն, որ իշխող տնտեսա-քաղաքական համակարգը զգացել է օրէնքի ու Սահմանադրութեան ուժը եւ այդ իրավիճակն ամրագրել է նաեւ օրէնսդրօրէն: Այս պայմաններում, ինչպէ՞ս է Սերժ Սարգսեանը պատկերացնում իրավիճակի փոփոխութիւնը:

«Պէտք է հիասթափեցնեմ անընդհատ յեղափոխութիւն անելու կողմնակիցներին: Մենք չենք շտապելու: Քաղաքական ոլորտում համակարգային փոփոխութիւններ կատարելիս շտապողականութիւնը եւ անխոհեմութիւնը երբեք լաւ աւարտի չեն հանգեցրել: Միեւնոյն ժամանակ կը հիասթափեցնեմ նաեւ նրանց, ովքեր գոհ են ստատուս քվոյից: Էական փոփոխութիւնները շարունակուելու են: Դրանք կը լինեն աստիճանաբար, մտածուած եւ փուլ առ փուլ, բայց կայուն եւ հետեւողականօրէն իրականացուած».- ասում է նա:

Փաստացի, Սերժ Սարգսեանը յայտարարում է «էվոլուցիայի» ճանապարհի մասին: Բայց որքանո՞վ է դա արդիւնաւէտ Հայաստանում ստեղծուած իրավիճակը փոխելու տեսակէտից՝ թէ՛ ժամանակի, թէ՛ հանրային մասնակցութեան առումով: Սերժ Սարգսեանն իր ելույթում խօսում է հանրային անտարբերութեան, իր խնդիրների լուծմանը չմասնակցելու մասին: Նա արդարացի է, երբ ասում է, որ առանց դրա հնարաւոր չէ հասնել արդիւնքների: Բայց, արդեօք էվոլուցիայի ճանապարհն այս դէպքում ենթադրում է հանրային անտարբերութեան յաղթահարումը: Արդեօք էվոլուցիայի ճանապարհը «էլիտար» գործընթաց չէ եւ չի մնում իշխող վերնախաւի շրջանակներում:

Հայաստանում իրականում այնպիսի իրավիճակ է, որ ցանկացած քայլ, որը միտուած է իրավիճակը փոխելուն, կը դառնայ իսկական յեղափոխութիւն: Օրինակ, եթէ կոռուպցիայի դէմ իրական պայքար լինի, հաստատուեն ազատ պիզնէսի հաւասար մեկնարկային հնարաւորութիւններ, դա իսկական յեղափոխութիւն կը դառնայ, քանի որ արմատապէս կը փոխուեն տնտեսական կառուցուածքն ու յարաբերութիւնները:

Եթէ Հայաստանում հաստատուի արդարադատութիւն, եւ վերացուի արտօնեալների ինստիտուտը, դա իսկական յեղափոխութիւն կը լինի, քանի որ այդ պարագայում արդէն տաղանդաւոր, զարգացում ապահովելու ու-

նակ մարդիկ աշխատանքի կ'անցնեն իշխանութեան բոլոր մարմիններում:

Այդպէս է բոլոր այն դէպքերում, որոնք իր ելույթում նշում է Սերժ Սարգսեանը, ներկայացնելով Հայաստանի ապագայի տեսլականը:

Իսկ ի՞նչ է էվոլուցիան Հայաստանի պարագայում: Դա խոշոր հաշուով համակարգի մոտացիան է՝ վերարտադրութիւնը ոչ քաղաքական ու գաղափարական հիմքի վրայ: Դա պետական իշխանութեան մարմիններում «սերնդափոխութիւնն» է՝ ժառանգականութեան հիման վրայ: Ընդ որում, «հայրերի ու որդիների» բնական հակադրութեան բացակայութեան պայմաններում այդ էվոլուցիան վեր է ածուել ղեգրադացիայի, երբ որդիներն աւելի յետադէմ են, քան հայրերը:

Արդէն երկու տասնամեակ Հայաստանում տեղի է ունենում այդ էվոլուցիան, որի արդիւնքում համակարգը հասել է «բիւրեղացման» եւ իր դիրքերը ներկայում ամրագրում է օրէնսդրօրէն, իսկ երկիրը պարզապէս նեխում է բոլոր ոլորտներում: Հասարակութիւնը գնաւում է սոցիալական, հոգեբանական ու արժէքային խոր ճգնաժամի մէջ, անտարբեր է դարձել սեփական երկրի ճակատագրին, «էլիտաները» լուծում են իրենց նեղ խնդիրները, յոյս ունենալով «անհատական» փրկութեան, երկրում չի ստեղծուել որեւէ արժէք՝ մշակութային, քաղաքական, տնտեսական: Կարող, կրէատիւ մարդիկ կամ հեռանում են, կամ փակուում իրենց նեղ շրջանակներում, այդպիսով փորձելով պաշտպանուել համատարած անգրագիտութիւնից, գոհակութիւնից, ցածր մոտիւացիաներից: «Արժէքներ», որոնք դարձել են գերիշխող եւ խրախուսուում են «էլիտաների» վարքով ու քարոզչութեամբ:

Նման իրավիճակում էվոլուցիոն ճանապարհը նշանակում է ընդամէնն այս երեւոյթների, հանրային-պետական ինստիտուտների ղեգրադացիայի խորացում:

Աշխարհի առաջատար ազգերը, զարգացման ճանապարհն ընտրած ժողովուրդներն ամէն օր յեղափոխութիւն են իրականացնում՝ տնտեսութեան, հոգեբանութեան, արժէքների, տեխնոլոգիաների, գիթութեան ոլորտներում: Դա նրանց էվոլուցիայի ճանապարհն է՝ երբ դէն է նետուում այն ամենն, ինչն անպէտք է ու խանգարում է հանրային-պետական զարգացմանն ու բարեկեցութեանը: Այդպիսով ստեղծուում է նաեւ հանրային լայն մոտիւացիա ու առողջ մրցակցութիւն, ինչը զարգացման գլխաւոր պայմանն է:

Սերժ Սարգսեանն իրաւացի է, երբ ասում է, որ պէտք է լինի ներքուտ բարդ ու բազմազան հանրութիւն: Պրիմիտիւ ու ցածր արժէքների վրայ յենուած հանրութիւններն ընդունակ չեն արձագանքել որեւէ մարտահրաւերի: Իսկ նման հանրութիւն ունենալու համար անհրաժեշտ են կտրուկ ու արագ փոփոխութիւններ մեր կեանքի բոլոր ոլորտներում: Հայաստանն արդէն այն սահմանագծին է, երբ «փուլ առ փուլ էվոլուցիայի» ժամանակը կարող է պարզապէս չբաւականացնել: «ԼՐԱԳԻՐ»

Սպասուում են Փոփոխութիւններ

ԱՐԱՄ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ

Մեր հասարակական կեանքի ոչ այնքան զեղեցիկ աւանդոյթներն է առանց կարգալու, առանց լսելու ու առանց մտածելու «քննադատ»: Այդպէս է լինելու նաեւ Սերժ Սարգսեանի ելույթի հետ կապուած՝ նման «քննադատներ» դուք կը կարողաք մօտակայ մէկ շաբաթուայ ընթացքում, նաեւ «Առաւօտի» էջերում:

Ընդդիմադիրներն ընկնում են յուզականութեան գիրկը, որի հետեւանքով նոյնիսկ իրենց շահերից ելնելով չեն ցանկանում սթափ գնահատել իրավիճակը եւ կանխագուշակել իրենց քաղաքական մրցակիցների քայլերը: Դա շարունակուելու է այնքան ժամա-

թիւնները պետութեանը կարող են օգուտ բերել, կ'ողջունէի, այն մասով, որով վնասում են, կը քննադատէի:

Լիւմպենին, իհարկէ, պէտք է «կոյր քննադատ» եւ յայտնի անունների 1000-րդ հոլովումը, բայց մտածող մարդիկ, կարծում եմ, կարիք ունեն աւելի խորը վերլուծութեան՝ խնդիրների եւ դրանց լուծումների ճանապարհների արծարծմամբ: Իմ խնդիրներից մէկը ես տեսնում եմ լիւմպենական զանգուածի կրճատման եւ մտածող մարդկանց աւելացման մէջ: Եւ պարտադիր չէ անպայման կեդրոնանալ քաղաքական թեմաների վրայ, կարելի է խօսել, ասենք, մշակոյթի, հոգեւոր կեանքի, կրթութեան, պատմութեան, ցան-

Եթէ ես քաղաքական գործիչ լինեի, ես կը փորձեի հասկանալ ինչպիսի փոփոխութիւններ են սպասուում իշխանական համակարգում, եւ ըստ այդմ կը կառուցեի իմ յետագայ գործունէութիւնը

նակ, քանի դեռ ազդեցիկ, յարձակողական բառապաշարը համարուելու է քաջութեան եւ «պայքարող տեսակի» դրսեւորում, լիւմպենացուած զանգուածը, նման բառեր լսելիս, բացականչելու է՝ «վախ, մալադեց, տղամարդու պէս պորտը տեղը դրեց»: Իմ տպաւորութեամբ՝ նախագահի ելույթը նշանակում է, որ մօտակայ ամիսների կամ գուցէ շաբաթների ընթացքում կառավարման բազմաթիւ օղակներում սպասուում են լուրջ կադրային եւ կառուցուածքային փոփոխութիւններ, եւ ոչ միայն Դաշնակցութեան՝ պաշտօններ ստանալու հետ կապուած:

Բերեմ ելույթից մի նախադասութիւն. «Գործը թողած եւ ուրիշների մասին պատերի տակ խօսացող մարդիկ տեղ չունեն մեր իշխանութեան մէջ»: Ես կարող եմ միայն կռահել, թէ ում է ուղղուած այդ ուղերձը, բայց իմ ոլորտի «մասով» չեմ կարող չնկատել, որ իշխանութեան մի թեւին (կամ «թեւիկին») պատկանող լրատուամիջոցն այնպէս է «քննադատ» միւս թեւը, որ ոչ մի ընդդիմադիրի մտքով անգամ չի անցնի: Եւ դա նախագահի նկարագրած վիճակի մասնաւոր դրսեւորումներից մէկն է:

Եթէ ես քաղաքական գործիչ լինեի, ես կը փորձեի հասկանալ ինչպիսի փոփոխութիւններ են սպասուում իշխանական համակարգում, եւ ըստ այդմ կը կառուցեի իմ յետագայ գործունէութիւնը: Այն մասով, որով այդ փոփոխու-

կացած այլ թեմայով: Կարելոր է, թէ ինձՊէՍ խօսել:

Ինչպէս յայտնի է, բանավէճի տոնայնութիւնն աւելի կարելոր է, քան դրա բովանդակութիւնը: Երբ ուսաստանցի փիլիսոփայ Գրիգորի Պոմերանցի այս միտքը մեզ այլեւս տարօրինակ չթուայ, մենք մի քայլ կը կատարենք դէպի քաղաքական նոր մշակոյթ: «ԱՌԱԻՕՏ»



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ ՎԱԴԷ ԱԶԱՊԱՅԼԱՆ

MASSIS Weekly

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, \$100.00 (First Class) Canada \$125.00 (Air Mail) Overseas \$250.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սերժ Սարգսեանի Խոստումները Հաւատ Չեն Եւրոյնչում Իրաւապաշտպաններուն

Սահմանադրական հանրաքուէն դիտարկած կազմակերպութիւնները պնդում են՝ 2017-ին օրինական ընտրութիւններ անցկացնելու՝ Սերժ Սարգսեանի խոստումները հաւատ չեն ներշնչում: Նախագահ Սերժ Սարգսեանն իր ելոյթում անդրադարձել է առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին եւ ընդգծել, որ դրանց «օրինականութիւնը աւելի կարեւոր է, քան դրանց արդիւնքները»:

Մինչդեռ, սահմանադրական հանրաքուէն դիտարկած «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի իրաւախորհրդատու Հերիքնազ Տիգրանեանը յիշեցնում է՝ ընդամենը 2 ամիս առաջ ընտրախախտումները կատարուում էին համակարգուած, եւ նպատակն էլ մէկն էր՝ ամէն զնով անցկացնել սահմանադրական փոփոխութիւնները:

«Հաւատ ներշնչելու համար պէտք է ունենալ որոշակի հիմքեր, բայց որովհետեւ այս ելոյթին արդէն նախորդել է սահմանադրական փոփոխութիւնների խախտուած հանրաքուէն եւ այդ մասին բոլորն են նշում, այլ բան է, որ իսկապէս դա ուղեկցուել է խախտուած ընտրախախտումներով, ապա այդ յայտարարութիւնները դառնում են սին խօսքեր, դրանց նկատմամբ որեւէ հաւատ չենք կարող տածել, որովհետեւ խօսքի եւ գործի ակնյայտ անհամատեղութիւն կայ: Այսինքն, այն ամէնը, ինչ խօսուում էր նախագահի ելոյթի մէջ, մենք տեսնում ենք դրա ձիւղ հակառակ արտացոլումը իրական կեանքում», - նշում է Տիգրանեանը:

Գիւմրիի ժողովուրդի «Ասպարէզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղեանը, ով նոյնպէս հետեւել է հանրաքուէի ընթացքին, ընդգծում է՝ Սերժ Սարգսեանն իր ելոյթում իրականում խոստովանում է՝ մինչեւ օրս որեւէ ընտրութիւն ազատ եւ արդար չի եղել:

«Ուշագրաւ է, որ իրեն արդէն ոչ թէ արդիւնքներն են հետաքրքրում, այլ այն, որ դրանք պիտի օրինականացնեն: Լաւ էլ

յանձնում էին, ի՞նչ էր եղել՝ կեղծում էին տղերքը, լցոնում էին, քեզ նախագահ էին դարձնում, ուզածդ մարդկանց Ազգային ժողովի պատգամաւոր էին ուղարկում: Ի՞նչ պատահեց, որ որոշեցիր յանկարծ օրինական դարձնել այդ ընտրութիւնները: Իսկ եթէ համարում է, որ նախկինում էլ են օրինական եղել, ի՞նչ կարիք կար յայտարարել հիմա այդ մասին: Տեքստեր գրողը, ըստ էութեան, մատնում է իրեն», - ասում է Բարսեղեանը:

Ազատ եւ արդար ընտրութիւնների կարեւորութեան մասին խօսելուց բացի Սերժ Սարգսեանը մէկ այլ ուշագրաւ յայտարարութիւն արեց՝ ընդգծելով, թէ յաջորդ խորհրդարանում որեւէ կուսակցութեան տեղը երաշխաւորուած չէ:

Փորձագէտները Սերժ Սարգսեանի այս խօսքերը դիտարկում են որպէս նախապէս տրուած խոստումներին եւ պայմանաւորուածութիւնների հրաժարուելու յայտարարութիւն:

«Երեւի մարդկանց, կամ քաղաքական ուժերին, ում ժամանակին յոյսեր են ներշնչել կամ խոստումներ տուել, հիմա ուղղակի խոստումներից հրաժարուելու ժամանակն է եկել», - ասում է Հերիքնազ Տիգրանեանը:

Լեւոն Բարսեղեանը յաւելում է. - «Տպաւորութիւն կայ, որ ինչ-ինչ մարդկանց սին խոստումներ են տուել ժամանակին, բազարներ են արել երեւի... հիմա կտրուում է էդ բազարները: Այս տեսակ մտքերի է հանգեցնում այս պրիմիտիւիստական միտքը: Իսկապէ՞ս ուրիշ բան չկայ ասելու, ի՞նչ որ մէկը բացատրում: Կամ, եթէ ինչ-որ մէկը եկել զեզանից պատգամաւորական մանդատ է ուզել, կաբինետում իրեն ասա՛ չեմ տալիս, էլի, երաշխաւորուած չէ: Կուսակցութիւններին կամ օլիգարխներին կամ քվազիօլիգարխներին հրապարակաւ հաթաթա՞ց ես տալիս: Գուցէ գնե՞րն ես թանկացնում, մտածե՞լ ես էդ մասին, Սերժ Սարգսեան: Ինձ թւում է, որ իսկապէս, երեւի, զին է իսկում, որովհետեւ տեղերը սահմանափակուել են»:

«Ս. Սարգսեանի Խօսքերը Վերցուած Են Պուտինի ճառից»

«Կամ փոխուել են ճառ գրողները, կամ այլ խնդիր է՝ մինչեւ տեխնիկական», - Սերժ Սարգսեանի ելոյթի մասին խօսելիս նշեց «Ընդդէմ իրաւական կամայականութիւնների» ՀԿ նախագահ Լարիսա Ալաւերդեանը: Նա շեշտեց, որ նախագահի խօսքը պէտք է պատրաստեն վերին աստիճանի պրոֆեսիոնալ մարդիկ: «Խօսքը պէտք է լինի հայերէնով լաւ հնչեցուած, ուրիշը պահուի: Իրականում ինձ թւում է՝ շատ բաներ վերցուած են վերջերս հնչեցուած մէկ այլ ճառից. «Մենք ասում ենք, պիտի ասենք, եւ մնացածները պիտի շատ անգամ կրկնեն», այս խօսքերն ուղղակի վերցուած են այլ երկրի ղեկավարի՝ Պուտինի ճառից»:

Մի դրական կողմ ելոյթում տրեւելի Ալաւերդեանը նկատել է. «Վերջապէս ասուեց, այն միտքը, որ անկախ Ղարաբաղի խնդրից՝ երկիրը կարող է զարգանալ»:

ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Մանուէլ Բաղդեանը փոր-

ձեց հակադարձել. «Չաւեշտն այն է, որ ուսական կրթութիւն ունեցող երկու մարդիկ պէտք է փորձեն վերլուծել զեկոյցի հայեցողութիւնը: Ես այդ պատասխանատուութիւնը չեմ կարող ինձ վրայ վերցնել, քանի որ լեզուաբան չեմ: Միգուցէ եւ կան լեզուաբանական խութեր, բայց դա speech writer-ների խնդիրն է, բայց կարեւորը զեկոյցի էութիւնն է: Այո, մենք ունենալու ենք նոր քաղաքական, իշխանական համակարգ: Բայց երբ շատ են մտածում ընտրութիւնների մասին, այլ ոչ՝ ընթացիկ պարտականութիւնների, դրանից երկիրը կարող է տուժել: Ուղեբաժն ինձ վրայ թողեց մեծ տպաւորութիւն: Դրանք ապագային միտուած մտորումներ էին»:

Տիգրան Ալաւերդեանի կարծիքով, սակայն, ելոյթում միայն գեղեցիկ ցանկութիւններ են ասուած. «Ես չեմ տեսնում այն, թէ ի՞նչ է փոխուելու: Այս ելոյթը կարծես ուղղուած է նրան, որ այսպէս էլ մնայ, լաւ է»:

ՀԱԿ-Ն ՈՒ «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ն ԴԵՐ ՀԱՄԱԾԱՅՆՈՒԹԵԱՆ ՉԵՆ ԵԿԵԼ ՄԱՐՍԻ 1-Ի ՄԻԱՏՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱԼԱՔԻ ՇՈՐՅ

«Նոր Հայաստան»-ն ու «Հայ Ազգային Կոնգրէս»-ն առայժմ համաձայնութեան չեն գալիս Մարտի 1-ին միասնական հանրահաւաք անելու շուրջ: Մեկնաբանելով Լեւոն Չուրաբեանի յայտարարութիւնը, թէ առանց Կոնգրէսի հետ քննարկման զուգահեռ հանրահաւաք յայտարարելը կոպտագոյն քաղաքական սխալ էր, Բաֆֆի Յովհաննիսեանն յորդորեց չսեփակահանջորհել Մարտի 1-ի ողբերգութիւնը:

«Քաղաքական պայքարը, Մարտի 1-ը, Հոկտեմբերի 27-ը, հակազգային հարուածների օրը ոչ մէկի մենաշնորհ չէ: Փոխանակ մէկը միւսին քարոզ տայ, մենաշնորհ, քաղաքացիական, հասարակական ուշադրութիւնը իր վրայ բեւեռի, որ հա՛, ես եմ, որ կամ, դուրս պիտի գանք այս պրիմիտիւ, գաւառական, եսապար մտայնութիւնից եւ հրապարակաւ դարձնենք համատեղ գործունէութեան դաշտ», - ասաց Յովհաննիսեանը:

Քաղաքային իշխանութիւնները ընդդիմադիր երկու ուժերին էլ թոյլ են տուել նոյն օրը նոյն ժամերին Ազատութեան հրապարակում ցոյց անցկացնել: Կոնգրէսի հետ բանակցող Գարեգին Չուգասեանը լաւատես է, որ միասին ամբիոն կը բարձրանան:

«Կարծում եմ, որ շաբաթուայ սկզբում մենք հաւանաբար դրական լուրեր կ'ունենանք: Եթէ ոչ, էն ժամանակ կը խօսենք», - ասաց նա: Մինչ այդ Երեւանի քաղաքապետարանն արգելել է հրապարակում երեք ամսից աւելի շարունակուող շուրջօրեայ նստացոյցը՝ Փետրուարի 26-ից սահմանափակելով զիշերային ժամերի հաւաքները:

«Մի բան կարող եմ զգուշաց-



«Ժառանգութիւն» կուսակցութեան ղեկավար Բաֆֆի Յովհաննիսեան

նել պարոն Սարգսեանին եւ յանցագործ այդ ուղղահայեացին, որը պարտաւոր է փոխուել արտահերթ ռեժիմով: Եթէ կայ բռնութեան փորձ մեր հրապարակի, ներ դրօշակի, մեր քաղաքացու նկատմամբ, մենք պիտի դիմակայենք ամբողջ ուժով», - ասաց «Ժառանգութեան» առաջնորդը:

Հանրապետականի հետ դաշինք կազմելու Դաշնակցութեան ցանկութիւնը Բաֆֆի Յովհաննիսեանը «մեղադրութիւն» որակեց: Իր գլխաւորած «Ժառանգութիւն»-ն առայժմ որոշում չունի՝ մասնակցելու է արդեօք յաջորդ տարուայ խորհրդարանական ընտրութիւններին:

«Եթէ այս տարի չփոխենք համապետական այս ապօրինի յանցագործ վիճակը, ես ոչ մի միութեանք պիտի չունենամ, եթէ յանկարծ որոշեմ մասնակցել, որ ես եւ իմ մասնակցած քաղաքական ուժը մէկ առ մէկ յաղթեմ միւսներին», - ասաց Յովհաննիսեանը:

Փոստանցեանը Փորձում Է Դատարանում Վիճարկել ԱԱԾ Նոր Տնօրէնի Նշանակումը

Հայաստանի Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամաւոր Ջարուհի Փոստանջեանը հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ Գէորգի Կուտոեանին Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱՄԾ) տնօրէն նշանակելու մասին նախագահի հրամանագիրը անվաւեր ճանաչելու պահանջով:

Ընդդիմադիր պատգամաւորը պնդում է, որ չեն պահպանուել «Ազգային անվտանգութեան մարմիններում ծառայութեան մասին» օրէնքի 19-րդ յօդուածի առաջին մասի պահանջները, ըստ որի այդ պաշտօնում «կարող է նշանակուել ազգային անվտանգութեան մար-

մինների այն ծառայողը, ով մինչեւ նշանակումն զբաղեցրել է ազգային անվտանգութեան մարմինների ծառայողների բարձրագոյն խմբի պաշտօն կամ վերջին երեք տարին զբաղեցրել է գլխաւոր խմբի պաշտօն եւ ունի զնդապետից ոչ ցածր կոչում»:

Ըստ Փոստանջեանի, Գէորգի Կուտոեանը ԱԱԾ-ում համապատասխան ծառայութեան փորձ չունի՝ նա չի զբաղեցրել պաշտօններ Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնում եւ չի հանդիսացել ԱԱԾ գնդապետ: Իր հայցադիմումին պատգամաւորը կցել է նաեւ Կուտոեանի կենսագրական տուեալները:

«Որեւէ Մէկը Յայտարարե՞լ Է, Որ Սերժ Սարգսեանը Դուրս Է Գալու Քաղաքականութիւնից»

Որեւէ մէկը չպէտք է սպասելիքներ ունենայ, որ Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը դուրս կը գալ քաղաքականութիւնից: Այս մասին, Փետրուարի 15-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է ԱԺ ՀՀԿ խմբակցութեան քարտուղար Գաբրիլ Մելիքեանը:

«Որեւէ մէկը յայտարարե՞լ է, որ Սերժ Սարգսեանը դուրս է գալու քաղաքականութիւնից: Նման սպասելիքներ որեւէ մէկը չպէտք է ունենայ», - ասել է Մե-

լիքեանը՝ պատասխանելով հարցին, թէ Փետրուարի 12-ին նախագահի ելոյթը նշանակում է, որ վերջինը չի պատրաստուում 2018թ.-ին հեռանալ:

Յիշեցնենք, որ Փետրուարի 12-ին Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը հանդիպել էր բարձրաստիճան պաշտօնեաների, տարբեր կուսակցութեաններ ներկայացուցիչներին հետ: Իր ելոյթում Սերժ Սարգսեանն անդրադարձել էր երկրի ներքաղաքական եւ արտաքին քաղաքական կեանքին:

ԼՈՒՐԵՐ

Ուորլիքը Պնդուլմ Է Ատրպեյճանին Յանձնել «Անվտանգութեան Գօտու» Տարածքները

Մենք դէմ չենք միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպութիւններում դարաբաղեան հակամարտութիւնը քննարկելուն: Այս մասին Turan-ին եւ «Ամերիկայի ձայնին» տուած հարցազրոյցում ասել է ԵԱՀԿ Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորլիքը՝ անդրադառնալով ԵՆԽՎ-ում ներկայացուած 2 բանաձեւերին:

«Մենք պաշտպանում ենք այդ հարցը ցանկացած կերպ բարձրացնելու Ատրպեյճանի եւ Հայաստանի իրաւունքը: Համանախագահները շեշտում են, որ Մինսկի խումբի բանակցային ձեւաչափն ուժի մէջ է մտնում: Մենք յոյս ունենք, որ բանակցութիւնների միջոցով հակամարտութեան կարգաւորման համար Հայաստանն ու Ատրպեյճանը հաւատարիմ կը մնան իրենց պարտաւորութիւններին եւ կը շարունակեն ՄԽ-ի հետ սերտ համագործակցութիւնը», - ասել է միջնորդը:

Նրա խօսքով՝ միջնորդները խաղաղութեան տանող միակ ուղին բանակցութիւններն են համարում:

«Երկարաժամկէտ կարգաւորման հասնելու համար մեր բանակցութիւնները հիմնուած են միջազգային իրաւունքի՝ ՄԱԿ կանոնակարգի, Հելսինկիի եզրափակիչ



Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորլիք

ակտի, տարածքային ամբողջականութեան սկզբունքների, ինքնորոշման եւ ուժ չկիրառելու որոշումների վրայ: Հակամարտութեան համապարփակ կարգաւորման մաս է հանդիսանում օկուպացուած տարածքները Ատրպեյճանին վերադարձնելը եւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի սահմանումը», - մէջբերում է պարբերականը Ուորլիքին:

Նա նշել է նաեւ, որ կողմերը եւ համանախագահները համակարծիք են, որ կարգաւորման հիմնական տարրերը հիմնուած են Մադրիդեան սկզբունքների վրայ:

«Առանց Ղարաբաղի Հայաստանն Իրաւունք Չունի ԼՂ Հարց Ներկայացնել»

Ռազմավարական եւ Ազգային Հետազօտութիւնների հայկական կենտրոնի (ՌԱՀՀ) գործադիր տնօրէն Կարապետ Կալենչեանի համոզմամբ՝ Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան հետեւանքով Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը ոչ միայն ամբողջութեամբ դուրս է մնացել ԼՂ հակամարտութեան հարցի շուրջ բանակցութիւններից, այլ ցանկացած քննարկումից:

«Մենք Լեռնային Ղարաբաղի հարցում իրաւունք չունենք ԼՂՀ-ն ներկայացնել: Միջազգային հարթակներում պէտք է ասել, դուք ԼՂ հարցեր էք բարձրացնում, ուրեմն պէտք է հարցնէք հենց ԼՂՀ ներկայացուցիչներին, որոնք ունեն Սահմանադրութիւն, երկիր: Բայց դա չի արւում, հանել են Ղարաբաղը բանակցութիւնից»

ամբողջութեամբ, այստեղ պէտք է մտածենք», - Tert.am-ի հետ զրոյցում ասաց նա:

Կարապետ Կալենչեանի խօսքով՝ նոյնիսկ Եւրոպական կառույցների ներկայացուցիչները ԼՂ հարցով զալիս են հակամարտող երկրներ, բայց չեն էլ ուզում գնալ Ղարաբաղ:

«Հասկանալի է, որ Հայաստանը ԼՂՀ-ի անվտանգութեան երաշխաւորն է, բայց քաղաքական առումով Ղարաբաղը պէտք է իր շահերը պաշտպանի, այլ ոչ թէ պէտք է այդ իրաւունքը դնի ամբողջութեամբ Հայաստանի վրայ: ՀՀ ղեկավարութիւնն էլ պէտք է ասի, որ մենք կարող ենք ընտրել, բայց վերջնական խօսքն իրենցն է, ոչ թէ Ղարաբաղի փոխարէն ինքը որոշումները կայացնի», - ասաց նա:

Սերժ Սարգսեան Յոյս Յայտնեց

Շարունակուած էջ 1-էն

առնող ու դրանց չաղթահարելուն ուղղուած միջոց են: Ես համոզուած եմ, որ կարճ ժամանակահատուածում Սահմանադրութիւնը դառնալու է ազգային համաձայնութեան փաստաթուղթ» ըսաւ Սարգսեան:

Շարունակելով, նախագահը ակնցուց, - «Վստահ եմ, որ սահմանադրական փոփոխութիւնների արդիւնքում Հայաստանի քաղաքական համակարգը կը դառնայ առաւել բաց, ճկուն եւ ներքուստ բարդ: Այն կը համապատասխանի մեր հասարակութեան դինամիկ եւ բազմակողմանի զարգացող սոցիալական կառուցուածքին: Կ'արձագանքի ազատ, ապահովուած, քննադատական մտածելակերպ ունեցող մարդկանց քաղաքական մշակոյթի: Ինչպէս շատ ժողովրդավարական պետութիւններում, քաղա-

քական պայքարի առաջնորդողները կը լինեն կուսակցութիւնները: Կուսակցութիւնները եւ նրանց կուսիցիաները կը կազմեն գործադիր մարմիններ, կ'առաջարկեն թեկնածութիւններ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների պաշտօնների համար: Նրանք կ'ունենան քաղաքական մրցակցութեան տեւական փորձ, պատասխանատու եւ իմաստալից փոխներգործութիւն ընտրողների հետ, միջկուսակցական համագործակցութիւն եւ սուր սոցիալական խնդիրների համար փոխզիջումային լուծումների տարբերակների որոնման գործելու ձև»:

Քաղաքական համակարգի փոփոխութիւնները մասին խօսելով Սերժ Սարգսեան ըսաւ, - Քաղաքական համակարգը կը բարեփոխուի եւ կը բարելաւուի քաղաքական միաւորումների մրցակցութեան

ՓԱՐԱՄԱԶԻ ԱՆՈՒՆՈՎ ԶՐԱՊԱՐԱԿ ՈՒՐՈՒԿՈՒԷՅԻ ՄԷՋ



Ուրուկուէյի մայրաքաղաք Մոնթէւիտիոյի կեդրոնական հրապարակներէն մէկը պիտի անուանակոչուի հայ ազգային ազատագրական ակնաւոր գործիչներէն, յեղափոխական ռահվիրայ Մատթէոս Սարգիսեանի՝ Փարամազի անու նով:

Այսպիսի հրամանագիր մը հրապարակեց մայրաքաղաքի քաղաքապետ Տանիէլ Մարթինէզը: Ան իր որոշումը կայացուց հիմնուելով թիւ 35,737 օրինագիծին վրայ: Քաղաքապետութիւնը իր այս որոշումով շեշտեց մեծանուն Հնչակեան ղեկավարի անմահացման կարեւորութիւնը, Փարամազի հետ նահատակուած 19 Հնչակեան ղեկավարներու կողքին:

ԵՄ Դեսպանը ՀՀ Իշխանութիւններին Կոչ Է Արել Առաջիկայ Ընտրութիւնները Դիտարկել Որպէս Երկրի Զարգացման Հնարաւորութիւն

Եւրոպական Միութիւնը յոյս ունի, որ 2017-ին Հայաստանի խորհրդարանական ընտրութիւնները կ'ընթանան միջազգային ամուր, օրինական հիմքի վրայ եւ երկրի հետագայ զարգացման մեծ խթան կը դառնան: Այդ մասին Փետրուարի 15-ին յայտնել է Հայաստանում Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Պիտտր Սվիտալսկին ԵՄ-ի ֆինանսաւորմամբ իրականացուող «Ծնողագուրկ երեխաների անհատական զարգացման հաւասար հնարաւորութիւններ» ծրագրի վերաբերեալ իրագրկման նպատակով առաջին գիտաժողովի շրջանակում լրագրողների հետ զրոյցին:

Եւրոպացի պաշտօնեայի խօսքով, Եւրամիութիւնում ձգտում են հաւատալ, որ գալիք՝ 2017-ի խորհրդարանական ընտրութիւնները կ'անցկացուեն լաւ ընտրական օրէնսգրքի հիման վրայ, որը կ'արտացոլի ԵԱՀԿ-ի յանձնարարական-

ները: Այն հարցին, թէ ինչ կը լինի, եթէ այդպէս չլինի, դիւանագէտը պատասխանել է. «Եկէք օգտագործենք «եթէ»-ից խուսափելու ցանկացած հնարաւորութիւն: Մենք մեծապէս յուսով ենք, որ կը խուսափենք «եթէ»-ներից, որովհետեւ հարցը Հայաստանի ապագային է վերաբերում»:

Հայաստանում ԵՄ-ի պատուիրակութեան ղեկավարը իշխանութիւններին կոչ է արել առաջիկայ ընտրութիւններին նայել որպէս երկրի քաղաքական, ժողովրդավարական եւ տնտեսական զարգացման խթանի: «Կարող եմ ասել, որ իշխանութիւնների եւ ընդդիմութեան ներկայացուցիչներին հետ զրոյցների ընթացքում շատ չիման կէտեր եմ տեսել, շատ ազդանշաններ եմ տեսել այն մասին, որ Ընտրական օրէնսգրքը կը համաձայնեցուի շատ արդարացի, պրոֆեսիոնալ եւ պատասխանատու եղանակով», - ամփոփել է Պիտտր Սվիտալսկին:

Վաղարշակ Յարութիւնեան. «Մոսկուայի Պայմանագրի Վերանայումը Կարող Է Հայաստանի Համար Օգտակար Լինել»

Ռուսաստանի կողմից 1921թ. Մոսկուայի պայմանագրի վերանայումը կարող է Հայաստանի համար օգտակար լինել: Այս մասին Փետրուարի 15-ին լրագրողներին ասել է ՀՀ պաշտպանութեան նախկին նախարար Վաղարշակ Յարութիւնեանը:

Նրա խօսքով՝ դժուար է ասել, թէ ինչ կ'որոշի Ռուսաստանի ԱԳՆ-ը, որը հիմա քննարկում է վերանայման առաջարկը, բայց Հայաստանի համար նման շրջադարձը միանշանակ շահաւէտ կը

չնորհի՝ պայմանով, որ լինի միջկուսակցական կոնսենսուս արտաքին քաղաքականութեան ռազմավարական սկզբունքների, սոցիալական կայունութեան, ազգային անվտանգութեան, սահմանադրական համակարգի հիմնարար դրոյթների եւ ինքնիշխանութեան պահ-

լինի: Անդրադառնալով ռուս-թուրքական յարաբերութիւնների վատթարացմանը՝ Յարութիւնեանը նշեց, որ ռազմաքաղաքական պլանում նրանք երբեք սերտ համագործակցութեամբ աչքի չեն ընկել: «Նման բան երբեք չի եղել: Զբօսաշրջութեան ոլորտում՝ այո, բայց ոչ ռազմաքաղաքական պլանում: Ռուսաստանի համար ՆԱՏՕ-ի անդամ երկրները, այսինքն՝ նաեւ Թուրքիան սպառնալիք են ներկայացնում», - եզրափակել է նախկին նախարարը:

պանման, քաղաքացու իրաւունքների եւ ազատութիւնների պաշտպանութեան, ինքնակազմակերպման եւ ինքնակառավարման բոլոր ձեւերի գոյութեան շուրջ: Նման կոնսենսուս գոյութիւն ունի գրեթէ բոլոր ժամանակակից ժողովրդավարական երկրներում:

ՈՉ ԹԵ ԶԵԲԱԿԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՆԵՐ, ԱՅԼ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ Ե ԱՆՅՐԱԺԵՇՏ

Շարքագրոյց Սոցիալ Դեմոկրատ Ընչակեան Կուսակցութեան Կեդրոնական Կարչութեան Աստուածատ Զակոբ Տիգրանեանի Ընտ



Հ-Տարածաշրջանային ռազմա-քաղաքական զարգացումները որ-քանով են անդրադառնում Հայաս-տանի վրայ:

- Տարածաշրջանային հակա-մարտութիւնների ֆոնին Մերձաւոր Արեւելքն ու Կովկասը միա-ձուլուեցին, յատկապէս՝ սիրիական պատերազմում Ռուսաստանի միջամտութիւնից յետոյ: Այստեղ Հայաստանը մտահոգուելու շատ հիմքեր ունի, քանի որ Մերձաւոր Արեւելքում կատարուող ամէն մի գարգացում իր բացասական կամ դրական ազդեցութիւնն է ունենալու մեր երկրի վրայ: Թէ՛ Մերձաւոր Արեւելքում եւ թէ՛ Կովկասում գլխաւոր դերակատարները նոյնն են՝ Ռուսաստան, Թուրքիա, Պարսկաստան:

Այն, ինչ այսօր կատարուած է Մերձաւոր Արեւելքում, դրանում Թուրքիան իր բացասական դերակատարութիւնն ունի, եւ աւելին: Թուրքիան տարածա-շրջանում անկայունութիւն է ստեղծում, եւ օգտագործում է իրավիճակը, նամանական դ՛ գաղթականների հարցը, թէ՛ եւ փորձում է աշխարհին ներկայանալ գաղթականներ ընդունող մարդա-սիրական պետութիւն: Նա գաղթականների հարցը որպէս թղթածրար է իր ձեռքում պահում եւ Եւրոպային ու աշխարհին պահանջներ է ներկայացնում:

Հ-Որքանով կը յստակեցուի տարածաշրջանի ռազմավարական նշանակութիւնը իրանի դէմ պատժա-միջոցների վերացումից յետոյ:

- Իրանի դէմ պատժա-միջոցների վերացումը ողջունելի է, կարծում եմ՝ անարդար էր, որ դրանք ձգուած էին այսքան տարիներ: Մի բանի համար եմ ցաւում, որ ժամանակին Հայաստանը չօգտագործեց տնտեսական այն բոլոր հնարաւորութիւնները, երբ Իրանը փակ շուկայ էր: Կարող էինք տնտեսական կամուրջ լինել, բայց չեղանք:

Հ- Ի՞նչ ապագայ էք կանխա-տեսում երբեմնի հայաշատ ու կազմակերպուած սիրիահայ հա-մայնքի համար:

- Սիրիահայութեան ապագան երկու անկիւնից պէտք է դիտարկել, մէկը՝ քաղաքական, միւսը՝ մարդկային: Քաղաքական առումով Սիրիան այսօր քայքայման եզրին է, բառի բուն իմաստով, այսինքն՝ կարողացել է որոշ տարածքի մէջ պահպանել իր պետական գոյութի-ւնը, մնացածը քայքայուած են:

Որքան շուտ վերջանայ պատերազմը, այնքան աւելի հեշտ կը լինի վերականգնել երկիրը, իսկ խորանալու դէպքում՝ աւելի դժուար կը լինի: Որքան երկար տեւի պատերազմը, այնքան ակնյայտ կը լինի Սիրիայի բաժանումը, դա կը դառնայ հրատապ. այնտեղ կայ քրդական գործօնը, թիւրքմենների գործօնը՝ թուրքերի առաջ քաշած: Այս բոլորը երկիրը տանում են բաժանման: Մեր ցանկութիւնն է, որ Սիրիան պահպանի իր տարածքային ամբողջականութիւնը, վերադառնայ խղաղ կեանքի, եւ ժողովրդի կամքով ընտրուի իշխանութիւն:

Հայութեան դերակատարութիւնը կապուած է այս բոլորի հետ, այսինքն՝ որքան երկար տեւի պատերազմը, այդքան աւելի դժուար կը լինի վերականգնել մեր գաղութը: Մեր ցանկութիւնը գաղութը պահպանելն է:

Գանք մարդկային գործօնին. որքանով է ճիշդ մարդկանց պահել կրակների մէջ, երբ այնտեղ վտանգուած է նրանց կեանքը: Ինքնաբերաբար, պիտի նային դուրս եւ պիտի գնան խղաղ պայման-ներով երկրում ապրեն: Յաւօք սրտի, Հայաստանն ի վիճակի չէ անելու այն, ինչ արեց Կանադան. ճանապարհածախսի, կեցութեան եւ աշխատանքի հնարաւորութիւն տուեց սիրիացի գաղթականներին: Դժբախտաբար, շատերի համար Հայաստանն ընտրուած էր ոչ թէ բնակութեան վայր, այլ՝ որպէս տարանցիկ երկիր՝ զուտ Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով: Անշուշտ, նրանք կը փափաքէին մնալ Հայրենիքում, բայց մի երկիր, որի ժողովուրդն է արտագաղթում, ինչպէ՞ս կարող է հիւրընկալել գաղթականներ: Հայաստանն արեց այն, ինչ կարող էր:

Հ- Ի՞նչպէ՞ս կը գնահատէք Արցախի ներկայ իրավիճակը եւ նրա շուրջ քաղաքական զարգացում-ները:

- Արցախի սահմանի ներկայ իրավիճակը չենք համեմատի 2015 թուականի նոյն ժամանակա-հատուածի հետ: Մէկ տարում ունենալ 60-ից աւելի զոհ, անշուշտ, ատրպէյճանցիները աւելի շատ ունեն, սա արդէն պատերազմական իրավիճակ է: Հայաստանը Արցախի հարցի խղաղ լուծման կողմնակից է եղել եւ կը մնայ: Հարցի կարգաւորման նախադրեանն այն է, որ այն Ազգերի Ինքնորոշման իրաւունքի շջանակներից ներս

պէտք է լուծուի: Եւ բանակցային գործընթացներում Արցախը եւս պէտք է ընդգրկուի: Մենք պէտք է կառչած մնանք այն սկզբունքից, որը եւ ճիշդն է՝ Արցախը՝ ինքը, պէտք է որոշի իր կարգավիճակը: Պէտք է ընդգծեմ նաեւ, որ Արցախը երբեք Ատրպէյճանի մաս չի կազմել, դա փաստ է: Այս կէտի վրայ էլ պէտք է կեդրոնանանք, Արցախը եղել է ինքնավար մարզ եւ այդ կարգավիճակում անկախութիւն է ձեռք բերել: Աւելի խոր գարգացումներ Արցախում չեն տեսնում, քանի որ Ատրպէյճանն այսօր ի վիճակի չէ, երկիրը ոչ միայն ներտնտեսա-քաղաքական խնդիրներ ունի, այլեւ Ալիեւը՝ իշխանութիւնը պահելու:

Հ- Հաւանակա՞ն են ներքաղա-քական զարգացումները Հայաս-տանում մինչ երկիրը կ'անցնի խորհրդարանական կառավարման համակարգին:

- Գալով մեր ներքին առօրեային տեսնում ենք, որ որքան թէժանում է տարածաշրջանում իրավիճակը, այնքան տնտեսական հետեւանքները դառնում են աւելի ծանր: Ռուսաստանի ներքաղա-ծուցութիւնն այս գարգացումներում ազդում է նաեւ Հայաստանի տնտեսական վիճակին: Մենք Հայաստանում պէտք է ունենանք կայուն եւ համերաշխ իրավիճակ:

Մենք ողջունեցինք սահմա-նադրական փոփոխութիւնների գործընթացը, բայց եւ այնպէս պէտք է հետեւողական լինենք: Եթէ որեւէ Սահմանադրութիւն թղթի վրայ է մնում, ապա այն ձեւական է դառնում: Սահմանադրութիւնը պէտք է իրագործելի լինի:

Հ- Կարծե՞ք ընտրապայքարը մեկնարկել է: Կուսիցիան ինքնա-փրկութիւն է, թէ՞ շահաւէտ գործարք:

- Այն, ինչ տեսնում ենք այսօր մեր ներքաղաքական կեանքում՝ կոալիցիայի ձեւաւորում, դա չի բխում մեր վիճակի բարելւման շահերից: Սա չի շեղում է մի կեղծ ամուսնութիւն. այսինքն՝ անձնական շահի համար ձեւականօրէն ամուսնանում են եւ բաժանման ժամանակն էլ յայտնի է: Այսօր Հայաստանի առօրեան պէտք է լինի՝ ինչպէս երկիրը դուրս բերել տնտեսական ճգնաժամից, ինչպէս վերականգնել ժողովրդի կորցրած յոյսը ապագայի հանդէպ, ինչպէս կանգնել արտագաղթը: Այս կոալիցիան, որ պիտի ձեւաւորուի, այս հարցերին լուծում տալ չի կարող. այն ձեւաւորում է գուտ ընտրական հաշիւների համար:

Սահմանադրական փոփոխութի-ւնների հանրաքուէի ժամանակ խնդիրն այն էր, թէ՛ որ կուսակցութիւնն էր առաջին տեղը զբաղեցնելու, եւ շեշտը դրում էր առաջին երկուսի վրայ: Այս կոալիցիան նոյն նպատակն է հետապնդում. 2017-ին որ կուսակ-ցութիւնն է առաջինը լինելու, որը՝ երկրորդը: Եւ այս բոլորը ոչ թէ ժողովրդի քուէով, այլ՝ պետական ռեսուրսները օգտագործելով: Դրա համար են նախարարութիւններ ու մարզեր ձեռք բերում, որպէսզի իրենց ռեսուրսները օգտագործեն:

Հայաստանն արդէն պաշտօ-նապէս մտել է ընտրապայքարի փուլ. տեսնում ենք նոր ձեւաւորուող

կուսակցութիւններ, եւ կը լինեն էլի նորերը, ովքեր հանդէս կը գան որպէս արմատական ընդդիմադիր կուսակցութիւն: Քիչ առաջ նշեցի, թէ Հայաստանը որքան մեծ դժուարութիւնների առջեւ է կանգնած, եւ եթէ մենք այսօր մեկնարկում ենք ընտրապայքար եւ մինչեւ 2017 թուականի Մայիս ամիսը զբաղուենք միայն ընտրութի-ւններով, ապա ժողովրդի հիսաթափութիւնն էլ աւելի կը խորանայ: Որովհետեւ, մենք որպէս պետութիւն, այնքան անելիքներ ունենք, եւ որեւէ կուսակցութիւն՝ իշխանական թէ՛ ընդդիմադիր, չպէտք է իր առօրեան ընտրութիւններով լցնի: Այնքան հարցեր կան լուծելու, բայց ո՞վ է լուծելու:

Հ- Սփիւռքը, որպէս Հայաս-տանում խոշոր ներդրող, իր շահերն ու իրաւունքները կարո՞ղ է պաշտ-պանել Հայրենիքում եւ ներգրաւուել պետականաշինութեան մէջ:

- Ելնելով ժողովրդի տնտեսա-կան խնդիրների առօրեայ ծանր հոգեվիճակից, եւ տեսնելով Սփիւռքում ինչպէս են արձագան-գում Հայաստանի ներկայ իրա-վիճակի վերաբերեալ, եւ տեսնում եմ թէ՛ Սփիւռքում եւ թէ՛ Հայաստանում յոյսի կորուստ կայ: Ոչ մէկն այսօրուայ Հայաստանի հետ յոյսեր չի կապում: Իսկ յոյսի կորուստը որտեղի՞ց է գալիս. վստահութեան չզոյլութիւնից: Լինի դա իշխանութիւն, թէ՛ ընդդիմութի-ւն, նպատաւոր իրավիճակ ստեղծող որեւէ մի կուսակցութիւն կամ իշխանութիւն գուցութիւն չունի: Հետեւաբար, մենք անելիք ունենք:

Սփիւռք-Հայաստան ինտէգ-րացման գործնական ծրագիր պէտք է մշակուի, եւ դրա ամենավառ մեխանիզմը Ազգային միասնական կառավարութեան ստեղծումն է, որում կ'ընդգրկուի նաեւ Սփիւռքը: Ի՞նչն է արգելում, որ Սփիւռքը Հայաստանում ունենայ չորս-հինգ նախարարութիւն: Տնտեսութեան գարգացման համար կարեւոր ազդակ է տուրիզմը, ինչո՞ւ չստեղծել Տուրիզմի նախարար-ութիւն եւ նրա ղեկավարումը յանձնել սփիւռքահայի, եւ այսպէս մի շարք օրինակներ: Երկրի տնտեսական գարգացման գործում կարելի է ընդգրկել բոլոր սփիւռքահայերին: Սա է միակ ձեւը: Գանգատում ենք, որ Սփիւռքը Հայաստանին չի աստարում: Այո՛, որովհետեւ վստահութիւն չունի, եւ յոյսն էլ է կորցրել, որ կարող է ինչ-որ բան փոխել, եթէ նիւթական ներդրում էլ ունենայ: Հետեւաբար, պարտաւոր ենք պատկերը փոխել. յոյս արթնացնել ժողովրդի մէջ եւ Սփիւռք-Հայաստան ինտէգրացման ծրագիրը գործնականօրէն առաջ մղել:

Հ- Ազգային միասնական կառավարութիւն ստեղծելու այս առաջարկին իշխանութիւնները ի՞նչ մտեցում կ'ունենան:

- Ամենայն պատասխանա-տուութեամբ եմ ասում՝ պարտադիր չէ, որ Ազգային միասնական կառավարութիւնը կուսակցա-կանացուի, Սփիւռքը պէտք է ներգրաւուած լինի ընդհանուր

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ԸՆԹՐԻՔ Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԻԱ ՀԱՅՈՒԹԵԱՆ



Սփիւռ-քահայութիւնը յուզող գլխաւոր իրադրութիւններէն մին է սուրիահայութեան կացութիւնը: Արդարեւ Սուրիոյ հնգամեայ քաղաքացիական պատերազմը պատճառ դարձած է խիստ անապահով եւ անկայուն վիճակի սեղծման: Ծուրջ քառորդ միլիոն գոհերու կողքին կան ասուրի նիւթական վնասներ, որոնցմէ մեծապէս ազդուած է երկրի երբեմնի բարգաւաճ հայ գաղութը: Ամերիկահայութիւնն անտարբեր չի մնալով այդ դժնդակ իրավիճակին դիմաց իր ատենին ստեղծեց Սուրիահայութեան Օժանդակութեան Մարմինը (SARF):

Անցեալ Հինգշաբթի Փետրուարի 11ին երեկոյեան ժամը 7ին Կլեյտէյլի «Ֆինիշիա» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ հանգանակային ճաշկերոյթ մը կազմակերպութեամբ Սուրիահայութեան Օժանդակութեան Մարմին, (SARF) որուն մաս կը կազմեն գաղութի տասը կրօնական եւ հասարակական կազմակերպութիւններ: Սոյն միջոցառումին ներկայ էին ազգային երեք կուսակցութիւններու, ինչպէս նաեւ կրօնական, կրթական եւ բարեսիրական կազմակերպութեանց ու մամուլի ներկայացուցիչներ, շուրջ 200 հոգի:

Օրուան հանդիսավար Ռաֆֆի Քէնտրիճեան իր բացման խօսքին մէջ պարզեց սուրիահայութեան դիմակալած աղիտալի տագնապն ու անկէ յառաջացած ցաւալի հետեւանքները, որոնց համար խիստ կարիք կայ արտաքին օժանդակութեան: Այս նպատակով նախաձեռնուած են բազմաթիւ միջոցառումներ, որոնցմէ գլխաւորն է Փետրուարի 21ին Լոս Անճելոսի մէջ կայանալիք պատկերասփիւռային դրամահաւաքը, որուն հասոյթը գլխաւորաբար պիտի յատկացուի Սուրիոյ հայկական վարժարաններուն եւ այլ կարիքներու:

right to self-determination and freedom, yet, the continued cultivation of hatred and aggression, the entrenched culture of systematic violations of human rights in Azerbaijan, their continued war-mongering and effective refusal to achieve a swift and negotiated peace agreement, mediated by the OSCE Minsk Group Co-chairs, represent an actual physical threat to the people of Nagorno-Karabagh, Ambassador Mnatsakanyan explained. He furthermore stressed that consolidated support of the international community to the negotiating process within the agreed format is of uttermost importance, “not least in order to deny the unwilling party the privilege of procrastination, deviation from agreed principles of the settlement and forum shopping.”

Referring to the principles of sovereignty, the Ambassador of Armenia noted that sovereignty entails responsibility, whereas irresponsible sovereignty represents a threat to international peace and security. Build-

ing peaceful and inclusive societies is, therefore, as much about responsibility of government, as it is about sovereignty. In this regard, Ambassador Mnatsakanyan emphasized that enhanced international co-operation to this end is, therefore, compelling, not least when viewed strictly through the prism of maintenance of international peace. “The function of prevention and elaboration of early warning mechanisms and capacity to channel early signs of deteriorating situations into the UN system remains a vital objective,” – suggested Ambassador Mnatsakanyan, recalling the Framework Analyses for Atrocity Crimes as an important tool in this regard.

The Open Debate was presided by H.E. Delcy Rodríguez, Minister of Foreign Affairs of Venezuela. Representatives of about seventy state members, including Deputy Foreign Ministers of Angola, Spain, Guyana, Argentina and El Salvador, as well as UN Secretary-General Ban Ki Moon participated in the Open Debate.

American Armenian Rose Float Association Elects New Board



LOS ANGELES -- The American Armenian Rose Float Association (AARFA) announced that it has elected its 2016 Board of Directors. The new, expanded Board consists of Noubar Derbedrosian (president), Stepan Partamian (treasurer), Johnny Kanounji (secretary), Hagop Parseghian (vice president), Areg Jerahian, Mgo Panossian, Reneh Simonian, and Arthur Kokozian, as well as newly elected members Mary Der-Parseghian, Esq., Mikayel Israyelyan, Oganey Jay (Hovik) Chimayan, Carmen Libaridian, and Eddie Zaratsian.

"This is a group of highly dedicated individuals noted for their years of community service and spirit of volunteerism," said outgoing Board president Stepan Partamian and added, "I am confident that our new Board will do a great job in rallying support for the construction of the third Armenian rose float and its participation in the next Pasadena Tournament of Roses."

Commenting on the Board's plans for the coming months, Noubar Derbedrosian stated, "We've already begun considering some wonderful ideas for the newest Armenian rose float, and share the enthusiasm of our hundreds of volunteers and supporters who look forward to creating the most beautiful Armenian rose float yet." A native of Baghdad, Iraq, Derbedrosian is a prominent Southern California entrepreneur whose volunteer work encompasses several community organizations, including the Armenian Youth Association of California. Currently he also serves on the Board of the Armenian Sisters Academy.

The mission of the AARFA is to raise funds annually for the design and construction of the Armenian rose float and its participation in the Pasadena Tournament of Roses. This year, the

association needs to raise \$300,000 in donations and corporate sponsorships to cover the costs of the project. Toward this goal, the AARFA has launched the Armenian Rose Float Ambassador Program, whereby volunteers can become city-specific ambassadors of the Armenian rose float to raise at least \$3,000 from their respective communities.

"By taking part in the next Tournament of Roses, the Armenian rose float will be seen by close to 1 billion people across the planet," Partamian said. "So it comes down to this: as a community, as a culture, we'll be spending a mere \$300,000 on the third Armenian rose float, yet be able to secure the kind of global exposure that would otherwise require millions of dollars."

Since the establishment of the Armenian Rose Float Ambassador Program last year, seven individuals have become ambassadors. They are: Garbis Der-Yeghiayan (representing La Verne, California), Carmen Libaridian (Hollywood Hills, California), Flora Dunaian (Pasadena, California – south of 210 Freeway), Margaret Mgrubian (Pasadena, California – north of 210 Freeway), Tony Melconian (La Crescenta, California), Hratch Kozibeyokian (Shadow Hills, California), and Greg Tufenkian (Glendale). Currently the AARFA is seeking to enlist additional ambassadors to represent cities across the US. Those who are interested can email the association at info@aarfa.org.

Parallel to working to expand the Ambassador Program, the AARFA is appealing for broad grassroots support of the Armenian rose float initiative. Tax-deductible donations can be made securely through the AARFA site (at aarfa.org) or by mailing a check to: AARFA, P. O. Box 60005, Pasadena, CA 91116.

Montevideo Square Designated

Continued from page 1

chief architect of what would be the Armenian Genocide.

Nonetheless, the SDHP Central Committee was determined to pursue the search for peaceful solutions, if and when possible, especially with the Turkish and Kurdish populace of the Ottoman Empire.

Unfortunately, these objectives were leaked to the Young Turks by an Armenian agent spying for the Turkish government. Hundreds of party mem-

bers were arrested and tortured for many months. When the mock trial began, however, the number of those accused was 23 including 2 who were tried in absentia.

On the morning of June 15, 1915 before dusk, all twenty men were hanged in Sultan Bayazid Square; the central square of Constantinople. The destiny of the Twenty Martyrs was intertwined with the destiny of the Armenian nation. They knew what was coming and sounded the alarm but they were betrayed by a fellow Armenian.

Eight Armenian Films to be Screened at SR Film Festival

NEW YORK—Eight Armenian films will be screened as part of the third edition of the SR Socially Relevant Film Festival, a ground-breaking non-profit film festival that showcases socially relevant films with human interest stories. The festival opens on the 14th of March with a panel on Adapting the Novel to the Screen with such prolific panelists as Pulitzer Prize winning playwright Robert Schenkkan, and widely published French novelist Marc Levy. The films screen from March 15-19 at The Bow Tie Cinemas Chelsea and the closing night Awards Ceremony takes place at the Tenri Japanese Center on the 20th of March.

The full line-up and program of this year's SR Socially Relevant Film Festival was announced at its Press Day, hosted at Bocca East in Manhattan, on February 2. Selected films will focus on the current topics of immigration, female empowerment, human exploitation, gender politics disability and more, and will feature distinguished personalities including Erin Brockovich, Olympia Dukakis, Sally Field, Marc Duret and others.

Two narrative features and six shorts revolving around Armenian themes will have a special presence in this year's film festival, including the International Premiere of 100 Years Later (directed by John Lubbock) which follows historian Ara Sarafian's journey through Anatolia as facts of the 1915 Armenian Genocide are uncovered and dialogue is established with local Kurds and Turks.

The second feature, Who Killed the Armenians? (directed by Mohamed Hanafy Nasr), will have its World Premiere at the festival and is the first Arabic documentary on the Armenian Genocide, filmed in Egypt, Armenia and Lebanon. The film reveals rare documents, footage and interviews related to the 1915 Armenian Genocide.

The short film, Eclipse, (directed by Ara Yernjakyan) which will have its U.S. premiere, revolves around the children who suffered and the families that were destroyed during the Armenian Genocide.

Girl on the Moon, (directed by Aren Malakyan), filmed in Armenia, focuses on the first steps of disabled



people and how they try to change the course of their lives through dance.

How to Cross from Jiliz to Jiliz, directed by Marineh Kocharyan and Sona Kocharyan, is about a young girl who dreams of being with her grandmother and relatives who live on the other side of the border, only a few meters away. The film will have its New York premiere.

Now I Know, directed by Anna Bayatyan from Armenia, will have its International Premiere, focusing on the theme of hope.

Shattered, directed by David Hovan, focuses on memories of war and chaos and post-traumatic stress disorder. It will have its New York Premiere.

Where is the Euphrates, Son? Directed by Rouben Pashinyan, filmed in Armenia, the film tells the story of an Armenian grandfather who arrives in Armenia as a tourist and tries to find the Euphrates River. It will have its New York premiere at the festival.

Founded by award-winning actor, filmmaker and curator Nora Armani, SR aims to satisfy a market need concentrating on everyday human stories as an alternative to the proliferation of gratuitous violence in film making.

In its first two years of the festival's founding, it has served as a platform for 108 films from 33 countries, offered four industry panels and presented over 12 awards to talented filmmakers from all over the world. SR believes that positive social change is possible through the powerful medium of cinema.

To stay updated on the entire slate of movies, dates, and times, or to purchase tickets, please visit www.ratedsrfilms.org.

ԿԱՅՑ ԵՐԻՏԱՍԱՐԳՎԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ԿԸ ՆԵՐՎԱՅԵՆՆԵ: ՀԱՅ ՖԻԼՄԻ ՓՈՒՈՒՑՈՆ
Տեղի Կ'ունենայ Անտոայ Առաջին եւ Երրորդ Հիմնադրի Օրերը

Հայ Կուսակցության Ֆիլմ, Հիմնադրի 18 Փետրուար 2016, Երեկոյան ժամը 7:30-ին
ՀԿԻՄ Կարօ Մազանյանի Մրսեի Ներս, 1069 N. Allan Avenue, Pasadena, CA
Մտայ՝ նախառուցիկ

ՍԿՈՏԻ & WHISKEY

GAIDZ Youth Organization – PRESENTS - GAIDZ Movie Night
ARMENIAN Film Festival; Every 1ST & 3RD Thursday of the Month
Armenian Comedy Movie; Thursday, February 18, 2016 at 7:30 pm
AEBU Garo Soghanalian Hall, 1069 N. Allan Avenue, Pasadena, CA
Entrance Fee: DONATION

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ-ՏԵՄԻՐԾԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՊԱՏՈՒԱԲԵՐ 40-ԱՄԵԱԿԸ

ԽԱՋԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

Շաբաթ, Փետրուար 27, 2016, երեկոյեան ժամը 7-էն սկսեալ, Պէվլըրի Հիլզի Հիլթըն շքեղաշուք սրահին մէջ տեղի պիտի ունենայ Հ.Բ.Ը.Միութեան Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի հիմնադրութեան պատուաբեր 40-ամեակը:

Ձեռնարկը իրենց ներկայութեամբ պիտի պատուեն թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան եւ գանազան շրջաններէ պիտի ժամանեն Հ.Բ.Ը.Միութեան Կեդրոնական Վարչութեան անդամներ:

Այդ օր, պիտի մեծարուի եւ գնահատուի վարժարանի հոգաբարձութեան 25 տարիներու արտակարգօրէն նուիրեալ, տեսլապաշտ եւ բառին պարզ, խորունկ եւ դասական իմաստով՝ վարժարանի ծանրակշիռ ղեկավարը՝ Սինան Սինանեան: Այդ առիթով թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի բարեխօսութեամբ, Տիար Սինան Սինանեան պիտի արժանանայ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառին կողմէ սրբատառ Կոնդակի եւ շքանշանի: Վերջին յիսուն տարիներուն Երուսաղէմէն, Ռուսիայէն, Պուլկարիայէն, Պոլիսէն, Սուրիայէն, Եգիպտոսէն եւ Իրաքէն, ու մասնաւոր լիբանանէն, Պարսկաստանէն եւ Հայաստանէն, ինչպէս նաեւ Գերմանիայէն եւ Պաքուէն մեծ թիւով հայեր Ամերիկայի Միացեալ Նահանգներ եկան եւ կայք հաստատեցին Գալիֆորնիա ու յատկապէս Լոս Անճելոս քաղաքը:

Նոր գաղթականներու ժամանումով Լոս Անճելոսի հայութեան ազգային կեանքը անկարգաբեր լիօրէն աշխուժացաւ: Նոր եկեղեցիներ, դպրոցներ, ակումբներ գոյութիւն առին, մշակութային եւ ընկերային ձեռնարկներ մրցանիշ կարող առատութեամբ սկսան տեղի ունենալ, այլատեսակ ու բազմատեսակ միութիւններ կազմուեցան, թերթեր հրատարակուելի սկսան, հայերէն լեզուի ուսուցման համար, ամէնօրեայ դպրոցներու կողքին, 70-է աւելի միօրեայ դպրոցներ հիմնուեցան: Երգի, նուագի, արուեստի, պարի, դպրոցները կը վիստան Լոս Անճելոսի մէջ, իսկ հարսանեաց սրահները եւ տարեցներու կեդրոններ ամէն քայլափոխին կը տեսնենք...

1975-ին, Հ.Բ.Ը.Միութեան տեղւոյս պատասխանատուները, գլխաւորութեամբ այդ օրերու երիտասարդ, քաջակորով Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի, Հ.Բ.Ը.Միութեան Կեդրոնական Վարչութեան եւ Պր. Ալեք Մանուկեանին դիմեցին ամէնօրեայ դպրոց մը բանալու համար: Հաւանութիւն առնելով, գործի անցան եւ Շըրմըն Ուէյ փողոցի վրայ գործող Ս. Պետրոս Հայաստանեայց եկե-

ղեցւոյ մէջ 1976-ին սկսան Հ.Բ.Ը.Միութեան Ս. Պետրոս ամէնօրեայ վարժարանը, տասնեակ մը աշակերտներ եւ միայն երեք հոգինոց ուսուցչական կազմ ունենալով: Քանի մը տարիէն՝ արդէն աշակերտութեան թիւը բազմանալով, Ս. Պետրոս եկեղեցւոյ դպրոցաշէնքը փոքր ըլլալով, Հ.Բ.Ը.Միութեան ղեկավարները աւելի մեծ դպրոցաշէնք մը ունենալու մասին սկսան մտածել: Մէկ-երկու տարի պետական վարձու դպրոցաշէնքի մէջ դասերը տեղի կ'ունենային: 1986-ին գնուեցաւ Canoga Park քաղաքի ներկայ դպրոցաշէնքի 6.5 արտավար տարածութեան վրայ շինուած պետական դպրոցը, երեք միլիոն տոլար վճարելով, որուն երկու միլիոնը Պր. Ալեք Մանուկեանի ընտանիքը տուաւ, իսկ մէկ միլիոն տոլար ալ գաղութէն հաւաքուեցաւ: Դպրոցին հոգաբարձութիւնը, առ ի գնահատանք Մանուկեան ընտանիքի նիւթական աջակցութեան, դպրոցը անուանեց Մարի Մանուկեան անունով: Քանի մը տարի ետք, լիբանանահայ բարերար Պր. Սարգիս Տեմիրճեան 1.25 միլիոն տոլար նուիրելով, եւ դարձեալ լիբանանահայ Նազարեան բարերար ընտանիքի երեք զուակները՝ Նազար, Նուպար եւ Կարպիս եղբայրները մէկ միլիոն տոլար նուիրեցին: Վարժարանի երկրորդական բաժինը անուանուեցաւ Տեմիրճեան ընտանիքի անունով, իսկ նախակրթարանի բաժինը անուանուեցաւ Նազարեան ընտանիքի անունով: Պր. Մանուկեանի դուստրը՝ Հ.Բ.Ը.Միութեան նախագահուհի Լուիզ Սիմոն եւս իր առատաձեռն նուիրատուութիւնը կատարեց այս դպրոցին համար:

Արդարեւ, այս վարժարանի մեծագոյն արժանիքը եւ առաքելութիւնը կը հանդիսանայ, որ Հ.Բ.Ը.Միութեան մեծ շրջանակը մեծագոյն սիրով եւ նուիրումով փարեցաւ այս դպրոցին: Այս հաստատութեան իւրաքանչիւր նուաճում կամ յաջողութիւնը մեր շրջանակին սիրտերը հպարտութեամբ լեցուցած են: Դպրոցի յաջողութեան գլխաւոր պատճառներէն էր նաեւ, որ հիմնադրութեան առաջին օրէն իսկ դպրոցը ունեցաւ ամբողջանուէր եւ հայկական ոգիով թրծուած հոգաբարձութեան անդամներ:

1991-ին հոգաբարձութեան անդամները սքանչելի գաղափարը ունեցան հրաւիրելու Սինանեան շինարարական ընկերութեան նախագահ՝ փոքր տարիքէն Հ.Բ.Ը.Միութեան շարքերուն մէջ հասակ առած՝ Սինան Սինանեանը, որ սիրով ընդառնեց ղեկավարներու հրաւերին եւ ստանձնեց հոգաբարձութեան ատենապետութիւնը:

Նորընտիր ատենապետը անմիջապէս գործի անցաւ եւ սկսաւ գործել վճարակամութեամբ, լիա-

կատար գիտակցութեամբ եւ ձեռնհասութեամբ:

Դպրոցի շէնքին նոր մասնաբաժիններ աւելցնելով, մարզարանը նորոգելով, դպրոցի կրթական ծրագիրը ժամանակակից պահանջներուն եւ ոգիին յարմարեցուց: Հայկական բաժնին համար երիտասարդ, կարող հայագէտներ պաշտօնի հրաւիրեց, նոր բարերարներ գտաւ, դպրոցի պիւտճէն միշտ հաւասարակշռուած եղաւ, մեծ ու փոքր բարերարներ գտաւ դպրոցին համար եւ հոգաբարձութեան կազմէն ներս երիտասարդ ուժեր հրաւիրեց:

Սինան Սինանեանի անձնագործութեան եւ անձնուրաց ղեկավարութեան շնորհիւ, դպրոցի հոգաբարձութիւնը, ուսուցչական կազմը, ծնողական այլազան մարմինները, սիրոյ եւ համերաշխութեան գեղեցկագոյն մթնոլորտի մէջ դպրոցը տարին յաջողութեան յաջողութիւն: Շրջան մը մինչեւ 950 աշակերտ ունենալով: Արդարեւ, Հ.Բ.Ը.Միութեան Մանուկեան-Տեմիրճեան վարժարանը մեր գաղութի պարծանքն է: Անոր կրթական մակարդակը, հայկական բաժնի ծրագիրը, արտադպրոցական այլազան միջոցառումները պարզապէս արժանի են ամէն գնահատանքի:

Այս դպրոցի շրջանաւարտները անխափր ընդունուած եւ աւարտած են Ա.Մ.Ն.Ի յայտնի համալսարաններ:

Այսօր, Հ.Բ.Ը.Միութեան Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի 40-ամեակին առիթով, ամէն բանէ առաջ կը շնորհաւորենք այս կրթական հաստատութեան հիմնադիր-



ները, մեզմէ չաւէտ բաժնուած ծառայողները եւ բարերարները: Քառասուն տարիներու ընթացքին գանազան ժամանակներուն ծառայող ուսուցիչ-ուսուցչուհիները, պաշտօնեաները, նիւթապէս եւ բարոյապէս այս հաստատութեան նպաստողները:

Ինչ խօսք, որ Հ.Բ.Ը.Միութեան Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի յաղթական քառասուն ամեակի տօնակատարութիւնը ցնծութեան եւ տօնակատարութեան օրն է նաեւ գաղութի բոլոր ամէնօրեայ վարժարաններուն անխափր, որոնք 50, 40, 30, 20 ամեակներ շարունակ ծառայած են մեր նորահաս սերունդի հայեցի կրթութեան, դաստիարակութեան եւ հայապահպանման սուրբ գործին: Փառք ու պատիւ հայկական ամէնօրեայ բոլոր վարժարաններուն:

Շնորհաւորանքի շատուկ խօսք ունինք, այդ գիշեր արդարօրէն գնահատուող եւ մեծարուող՝ Հ.Բ.Ը.Միութեան Կեդրոնական Վարչութեան փոխ-նախագահ, գաղութիս բազմաթիւ կազմակերպութեանց ղեկավար Տիար Սինան Սինանեանին:

Բոլորին միասնական եւ համախառն ճիգերուն եւ նուիրումին առջեւ կը խոնարհինք եւ կ'ըսենք.— Ձեր վարձքը կատար, նորանոր ամեակներու մաղթանքներով:

Չակտրայիս
ԽՐԱԽԱՃԱՆՔ
 ԵՒ ՁՈՒԿԿԵՐՈՅԹ
 Կազմակերպութեամբ՝
ԿԼԵՆՏԵՅԼԻ ԱՐՄԵՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱՃԻՒԴԻ
ՇԱԲԱԹ, 19 ՄԱՐՏ 2016
 Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
 1060 N. Allen Ave. • Pasadena, CA 91104
 Տոմսերու համար դիմել՝ (818) 913-9311
 ՄՈՒՏՔԻ ՆՈՒԵՐ՝ \$30.00

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

«ԿՏԱԿ»-Ը...



ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԶԷՊԷՃԵԱՆ

«Միացյալ լաւագոյնը ընդունելի է ինծի համար»

«Գալուստ Կիւլպէնկեանի անունը եւ գործը շատ մեծ նշանակութիւն ունին փորձուգալի մէջ: Ամէն մարդ գիտէ գինք»: Փորձուգալի մէջ գործակիցս է Թիմոթէոն, որուն հետ երկար տարիներու բարեկամութիւն եւ գործակցութիւն ունիմ: Եթէ որոշ չափով լսած է հայերու մասին, նաեւ՝ մեկնելով մեր բարեկամութենէն, բայց Թիմոթէոյին համար Կիւլպէնկեանը լաւագոյն հայու մը պատմութիւնն է:

Յունուար 2016-ին Լիզպոնի գեղեցիկ փողոցները կը շրջագայէինք՝ հասնելու համար կեդրոնական մաս եւ մեծ տարածութեան վրայ հիմնուած Կիւլպէնկեան հիմնարկ:

Փորձուգալը ունի հետաքրքրական եւ այլատեսակ պատմութիւն: Եթէ երկար տարիներ եղած է մէկ կողմէ գաղութատիրական «կայսրութիւն», միւս կողմէ՝ նաեւ ունեցած է ծովագնացներ եւ հետագոտողներ, որոնք միշտ ալ տքնած են աշխարհի մէջ նոր հորիզոններ գտնելու: Քսաներորդ դարուն երկիրը մտած է տիրապետութեան տակ մենատիրական, այլ խօսքով՝ «բռնատիրական» կառավարութեան մը, որ երկիրը առաջնորդած է աղքատութեան եւ դարձած՝ յետամնաց: 25 Ապրիլ 1974-ին է, որ խաղաղ ու կանաչ յեղափոխութեամբ մը՝ «Մեխակներու յեղափոխութիւն»-ով, կրցաւ Անթոնիօ Սալազարի կառավարութիւնը տապալել եւ հիմը դնել աւելի ժողովրդավար պետութեան մը:

Թիմոթէոն վայրկեանուան մը համար կանգ առաւ «Աւիս» պանդոկին առջեւ եւ զայն ցոյց տալով՝ ըսաւ. «Գալուստ Կիւլպէնկեանը փորձուգալի մէջ իր ամբողջ կեանքը անցուց այս պանդոկին մէջ»: Ան կը խօսէր աւելի քան տասը եւ երեք տարիներու մասին՝ 1942-էն մինչեւ մահը 1955-ին:

Սկիւտար, Պոլիս ծնած Գալուստ Կիւլպէնկեան սիրեց Լիզպոնը, եւ հաւանաբար Լիզպոնը սիրելուն մէջ կար անցեալէն՝ իր «արմատէն» յուշեր եւ պատկանելիութեան զգացում, ինչ որ կ'արտացոլար անոր յուշագրութիւններուն մէջ. «Լիզպոնի Թակուս գետը կը լիչեցնէր իր ծննդավայր Վոսփորը...»: Եւ այդ յուշերն ու պատկանելիութիւնը գինք մղեցին ստեղծելու իր «երազը»՝ «կտակը», նոյնինքն Թակուսի գետին ափերուն: Եթէ «կտակը» տուն տուաւ հիմնարկի մը՝ համամարդկային բնոյթի, բայց նոյնքան նաեւ հայ-

կական հիմքով օժտուած կառույց մըն էր, եւ հոն Կիւլպէնկեան պիտի ապրէր, ապրեցնէր եւ բազմացնէր իր «ինքնութիւնը»:

Հաստատութեան մեծ շէնքին, թանգարանին, պարտէզի մոտքին կանգնած՝ ուզեցի տեսնել Ուիլիըմ Սարոյեանի անուանած՝ «Այս իւրայատուկ ծեր մարդ»-ը եւ անոր կեանքին մէջէն տուն տուած մեծ գործը:

Գալուստ Կիւլպէնկեան սիրած է արուեստը եւ բնութիւնը: Նախընտրած է ըլլալ առանձին եւ հեռու՝ լուսարձակներէ: Բայց եղած է ինքնավստահ, նոյնը ներշնչած է ուրիշներու, այդ ինքնավստահութիւնը իր կեանքին մէջ ունեցած է որպէս տեսլական: «Միացյալ լաւագոյնը ընդունելի է ինծի համար...»: Բայց Գալուստ Կիւլպէնկեանի համար «ինծի»-ն եղած է իր անձնական կեանքն շատ աւելի լայն եւ ընդարձակ դուրս գալով իր «ես»-էն՝ բացուելու համար աշխարհին ու քաղաքակրթութեան: Վերջապէս ան եղած է «համաշխարհային» քաղաքացի՝ նկատի ունենալով այն իրականութիւնը, որ ապրած եւ եղած է գործարար շատ մը երկիրներու մէջ՝ սկսելով քարիւղի ընկերութիւններու իր գործարքներէն եւ հասնելու համար «Պարոն հինգ առ հարիւր» պատուաբեր մակդիրին: Այդ «բացուելու» իր տրամադրուածութեան մէջ միշտ իւրայատուկ մնացած է «իր հայկականութիւնը, ինչ որ իր կեանքին եւ գործունէութեան համար ստեղծած է կայունութիւն եւ տուած՝ իւրայատուկ ինքնութիւն»:

Իսկ այս «իւրայատուկութեան» ապացո՞ւյցը...: Հապա՝ հպարտութիւնը:

Աւետիս Ահարոնեան իրեն շնորհած է Հայաստանի Ա. Հանրապետութեան անցագիրը: Գալուստ Կիւլպէնկեան ճամբորդած է հայկական անցագիրով՝ անկախ այդ իրականութենէն, որ ան ունէր նաեւ եւրոպական քաղաքացիութիւն...:

Իր հայ ժողովուրդին ապրած Յեղասպանութեան ողբերգութիւնը կարելի չէր աննկատ թողնուլ: Ան հաւատաց հայ ժողովուրդին վերապրելու հրամայականին, նաեւ՝ արաբական աշխարհին, ուր Յեղասպանութենէն ճողոպրածները հասած ու ստեղծած են հայ գաղութներ՝ իբրեւ հայութեան գոյատեւման փաստ: Ան հիմնեց կրթաթոշակներ, ընծայեց բժշկական ինստիտուտներ եւ իր օգնութիւնը հասաւ մինչեւ Այնճար (Լիբանան): Իր նպատակը բերաւ Այնճարի հողատարածքին գնման, որովհետեւ սեղանահանուած հայուն նոր պատուարան տեսաւ այս շրջանին մէջ:

«Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկի հայկական բաժանմունքը մէկ այլ խօսուն եւ գործօն շարունակութիւնն է այս կտակ-իտէալին: Հոն, ուր հայեցի դաստիարակութիւնը եւ ազգային-մշակութային ինքնութեան պահպանումը հիմնական կռուաններ են հայապահպանման: Դոկտ. Ռազմիկ Փանոսեանի աշխուժ եւ գործօն առաջնորդութեամբ, հայկական բաժանմունքը այսօր նոր շունչ եւ տրամադրութիւն կը ներշնչէ հայաստանեան եւ սփիւռքեան մեր կեանքերուն:

Հանդիպումները եւ տարբեր յայտագիրները, արուեստի թանգարանի հարուստ հաւաքածոն, Կիւլպէնկեանի անուան նուագախումբին ելոյթը, պարտէզ-գրաստիպարը ու տակաւին: Սյա բոլորին մէջ մտքիս մէջ կար մէկ հարցում. «Ո՞ւր է մեծութիւնը այս հայ մարդուն»: Եթէ ոչ իր ապրած կեանքին ու գործունէութեան, բայց անպայմանօրէն իր... «կտակ»-ին մէջ:

«Կտակ»-ը՝ իր անձնական ասպարէզային կեանքի նիւթական գործարքներու հսկայական եկամտուններուն եւ հարստութեան վերաբերող: «Կտակ»-ը՝ իր համամարդկային ու համահայկական «արժէքներու» գիտակցութեան եւ անոնց գոյապայքարի գործընթացին:

Եթէ կայ «կտակ»-ը լիցքաւորող նիւթական ուժը, բայց նաեւ՝ անոր հոգին... Գալուստ Կիւլպէնկեանի մեծութիւնը կը կայանայ հոն, ուր ան նիւթականը եւ հոգին կրցաւ միաւորել եւ տանիլ զայն դէպի ապագան: Ու ան մնաց «ինքնավստահ» իր համոզումին մէջ, թէ հայր պէտք է շարունակէ ապրիլ, եւ թէ՛ հայուն ապրիլը ինքնամփոփ եւ ինքնիր մէջ է, թէ ուրիշին «բացուելու» քաղաքականութիւնը անհրաժեշտ է, բայց միշտ պահելով հիմքը՝ «հայկականութիւնը»: Բան մը, որուն ամուր կառչած մնաց



Գալուստ Կիւլպէնկեանը:

Բայց յուշագրութիւններուն մէջ եւ իր իսկ արտայայտութեամբ կան չիրականացած նպատակներ: «Երկու նպատակներ չկրցայ իրականացնել կեանքիս մէջ: Գիտական մարդը եւ երազող մը՝ պարտէզի մը մէջ, գոր ես մշակած եմ»:

Եթէ ան չկրցաւ իրականացնել այս երկու նպատակները իր ողջ կեանքին ընթացքին, բայց հիմնեց «կտակ»-ը՝ հիմնարկը...

Հոն, ուր հայը պիտի կարենայ «երագել» եւ «երագ»-ին մէջէն «մշակել» իր՝ հայուն «պարտէզը» իմա՝ կեանքը: Իսկ հայուն կեանքին մասին երագելու համար պէտք է զգացում եւ հպարտութիւն, բայց նոյնքան նաեւ՝ «գիտական» միտք, որ համամարդկային իրականութեան մէջէն պիտի ստեղծէ համահայկական ենթահողը: Այն ենթահողը, որ հայուն պիտի տայ ապրելու ապահովութիւնը:

Գալուստ Կիւլպէնկեանի «կտակ»-ը իւրաքանչիւր հայուն «կտակ»-ն է, նաեւ՝ առաքելութիւնը, համամարդկային մէջէն համահայկական կեանքեր ապահովելու կռուանները:

El Niño Awareness and Public Forum

Presented by
 Armenian Athletic Association Ladies Society
THURSDAY, MARCH 24, 2016
 Starting at 7:00 p.m. – 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Keynote Speaker
 Pasadena Police Chief Phillip Sanchez

FREE ADMISSION • ALL ARE WELCOME
 Refreshments will be served

«ՐԵ~3 ԱՇԽԱՐՀ» ՄԱՅՐԻԿԻՍ ՅԱՃԱԽԱԿԻ ԱՍՈՅԹԸ

Ռ. ԿՈՐԻԻՆ
(Շարունակում և նախորդ թիվում)

1992 թվականին ծնողիս առիթ է ընձեռնելուս գնան Գերմանիա-Բերլին մայրաքաղաք Նորիկ եղբորս այցելութեան: Նորիկը եւ Սուզանան ջերմօրէն ընդունում եւ ամէն տեղ պատեցնում են: Պապաս եւ մամաս շատ գոհ էին մնացել Նորիկի ընտանիքից: Բերլինի խոնավ օդը պապայիս դիւրը չէր եկել, նա Գերմանիայից վերադարձին հիւանդանոց է, ականջները մէջ ձայն էր ընկել, ժամանակ-ամսական զգացում էր, բժիշկները չկարողացան բուժել, դա պատճառ դարձաւ մարմնի տարբեր մասերի տկարացման, օրըստօրէ հիւժուում եւ ուժաթափ էր լինում, հագիւ ոտքի վրայ էր, այդ վիճակում մայրս ամէն տեսակ հասնում եւ խնամք էր տանում, անշուշտ եւ Օննիկ եղբայրս չզլացանք մեր որդիական պարտականութիւնների մէջ եւ այլ հարցերում, այդ ամէնով հանդերձ հայրս սրտի նուազացման պատճառով հոգին աւանդեց Յունիս 2, 1994 թվին, 91 տարեկան հասակում:

Մայրս այրիացաւ, բարեբախտաբար մենակ չէր, բոլորս մէկ շէնքում էինք պարում, նա առողջ էր եւ իր ուժերի վրայ յենուած:

Իրանի Իսլամական հանրապետութեան կայացումի յաջորդական տարիներում առաւելաբար ոչ իսլամ փոքրամասնութիւնների մօտ արտագաղթելու ցանկութիւններ էր առաջացել երիտասարդների մէջ, որոնք իբր թէ յուսահատ իրենց սպազայից տարբեր միջոցներով հեռանում էին երկրից արեւմտեան երկրներում վառ հեռանկարով տարուած: Այդ մտայնութիւնը վարակիչ հիւանդութեան նման տնէտուն էր անցնում եւ առօրեայ խօսակցութեան նիւթ էր դարձել: Այլսի ծնողները, եղբայրը եւ քոյրերը ընտանիքով արդէն իսկ մեկնել էին ԱՄՆ: Մեկնածները իրենց մնացած հարազատներին եւս զրգուում էին արտագաղթելու օգնութիւններ խոստանալով:

Մամաս դէմ էր արտագաղթին դէպի արեւմտեան երկրներ, նա ամէն տեղ պաշտպանում էր իր տեսակէտը բացատրութիւն տալով.

-Ինչ կայ արեւմտեան, որ էստեղ չկայ, էս մեր երիտասարդները որտեղ են էթում, սովորողի եւ աշխատողի համար էստեղ էլ միջոցները շատ են: Մարդ Հայաստանին մօտիկ երկիրը չի թողնի, գնայ աշխարհի էնկողը, էն հեռու երկիրը, որտեղ գնալ-գալը շատ դժուար կը լինի, հիմա պայմանները լաւ են, եթէ յետոյ վատացան, ինչ պիտի անեն:

-Չէ, այ մէր, սխալ ես ասում, երիտասարդութիւնը սիրում է ազատութիւն, սիրում է յառաջադիմութիւն ունենալ, կեանքը վայելի, ուզած ձեռով հագնուի եւ ապրի.

-Չէ՛ բայց, եթէ ամէն մարդ իր ուզած ձեռով ապրի, աշխարհը կը դառնայ խառնարան, շուքը տիրոջ չի ճանաչի, ազատութիւնը չափ ու սահման ունի, մարդկային կարգ ու կանոն պիտի լինի, կինը պէտք է պարկեշտօրէն հագնուի եւ ենթարկուի ամուսնուն.

-Բայց մամ, կեանքը միշտ փոփոխութեան մէջ է.

-Այ տղայ, կեանքի միջոցներն են փոխուում, շնորհքը հօ չի փոխուում, շնորհքը մնում է շնորհք,

այսինքն առաքինութիւնը մնում է նոյնը, մարդ խելք պիտի ունենայ, հասկացողութիւն պիտի ունենայ, կարծես ԱՄՆ-ում քասէն բողոք են եւ գոյլը տուել ձեռքը:

Մամայիս հետ վիճել չէր լինում, նա իր համոզումներն ունէր:

Մէկ ամսակ արձակուրդը գեփիւռի պէս անցաւ եւ մօրս ու հարազատների արցնկալած աչքերով հրաժեշտ տուի: Գոռար է մօրից եւ հարազատներից կտրուել, ծանր է ծնուած երկրից, մեծացած տնից եւ ապրած քաղաքից բաժանուել, որոնք որպէս կենդանի յուշեր շարունակ միտդ են գալու եւ ձեռնահասութիւն չունենալու դէպքում քեզ նեղելու են, յուզելու, մտածմունքի մէջ են գցելու եւ թախիծ են պատճառելու: Հիմա արտագաղթողներից շատ-շատերը այդ կարօտախտով տանջուում են, ճիշտ են ասել՝ ամէն մարդ իր արարքին է արժանի, մեր արածն է ու մեր որոշածը, պէտք է անթեղուած կրակի պէս, անխօս ցաւով տանել օտարութեան նեղութիւնները: Հայերիս համար արտագաղթը Հայաստանին սահմանակից երկրներից դէպի արեւմտեան երկրներ թող չքաջալերուի, քանի որ ձուլման վտանգ է սպառնում աւելի շատ քան Միջին Արեւելեան երկրներում, հայրենիքից ընտանիքներով արտագաղթը արդարանալի չէ, եթէ իսկապէս կարիք է թող երիտասարդները գնան, աշխատեն, դրամ հաւաքեն եւ մի որոշ ժամանակից յետոյ վերադառնան, սա օգտակար է թէ՛ իրենց թէ՛ երկրին: Մի ժամանակ Ծահի օրօք Պարսկաստանում անգործութիւն կար, երիտասարդ արհեստաւորները Բոլիւիոյ էին գնում աշխատանքի, ուր լաւ վարձադրուում էին, մի որոշ ժամանակ աշխատելուց գուժար էին հաւաքում եւ վերադառնում էին իրենց ընտանիքների մօտ, գործ էին դնում եւ ապահով ապրում էին:

Մամային Օննիկի յոյսին թողած եկել եմ ԱՄՆ ընտանիքիս մօտ, սակայն մտահոգ եմ մամայիս առողջութեան նկատմամբ, հեռախօսը միակ միջոցը, որով իր մասին հարցնում եմ.
-Այլօ՛, մամ ջան, Ռուբէնն եմ, լսո՛ւմ ես, քէֆը ինչպէ՞ս է, ի՞նչ ես անում մամ.
-Ռուբէն ջան դո՛ւ ես.
-Հա՛, մամ ջան.
-Լաւ եմ, ոտիս վրայ եմ, ապրում եմ էլի, իմ մասին չմտածես.
-Մամ ջան, լաւ պահիր քեզ, լաւ սնուիր, ճարերդ ժամանակին ընդունիր.
-Լաւ բալէս, դուք ինչպէս էք, Այլիսը, էրէնքը ինչպէս են, Այլիսը, Արմինէն, Սեւակը, Արփան, Լուսինէն լա՛ւ են.
-Բոլորս էլ լաւ ենք, մեզ համար բոլորովին չմտածես:
-Մամ ջան, քեզ պահելով արա, որ գալիս եմ մօտդ, քեզ առողջ ու ուրախ տեսնեմ:
Բայց ինչպէս կարելի է չմտածել, գիտեմ, թէ՛ ինքն է մտածում եւ թէ՛ ես:
Կեանքը առաջ է գնում եւ օրերը շատ արագ իրար են յաջորդում: ԱՄՆ եկածներից շատերը դժգոհում են շատ գործելուց եւ վազվզելուց, ուրիշներ էլ գանգատուում են մշակոյթի եւ սովորութիւնների անհամեմատ տարբե-

րութիւններից, միապաղաղ եւ տաղտկալի կեանքից: Եթէ ԱՄՆ-ում ծուլութիւն արեցիր, կորած ես, որեւէ մի արտօնուած գործի տեսակ ամօթ չէ, այլ՝ յարգելի է այն մարդը, որ աշխատում է:

Ուրբաթ 13 յուլիս էր, գրասենեակում զբաղուած էի աշխատանքովս, ժամը 11-ն էր սեղանիս հեռախօսը գանգեց, ըստ սովորականի ձայնափողը վերցրի եւ ձայն տուի.

-Այլօ՛, լսում եմ.
-Այլօ՛, Ռուբէն, Օննիկն եմ.
Ձայնը նուազ էր գալիս հեռուից՝ Պարսկաստանից:
-Հա, ախպեր ջան, ինչ կայ.
-Ուզում եմ ասել, որ մամին տարել եմ հիւանդանոց.
-Ինչ ասացի՞ր, հիւանդանոց, ինչո՞ւ Օննիկ ջան, ի՞նչ է պատահել.
Ձգացի, նա չի ուզում ամէն ինչ բացատրել:

-Տանը նստած մամի հետ զրուցում էի, մէկ էլ տեսայ, մամէն աթոռի վրայ գլուխը թեքուեց, արագ բռնեցի եւ պառկացրեցի, տեսայ թուլացել է, բայց շնչում էր, շտապ օգնութիւն կանչեցի, տարայ Մոյսու հրեաների հիւանդանոցը, սրտի բժիշկը քննելուց լետոյ ասաց, ուղեղի կաթուած է ստացել, պէտք է հիւանդանոցում մնայ բուժուելու համար.

Աչքերս թացացած եւ սմբած վիճակում կարդում եմ եղբորս միտքը, որը լաւ լուր չէր հաղորդում:

-Օննիկ, ինչ կարիք կայ մամի համար արա, փողից մի իննալի, դրամ կայ, շուտ-շուտ մամի վիճակից տեղեկացրու.

-Աչքիս վրայ, ինչ որ պէտք է կ'անեմ:

Ձայնափողը դրի տեղը, խեղճացած դարձայ թաղէտիս, միութեան անդամներից մէկը դիմացս գրասեղանի մօտ նստած.

-էս էլ Ամերիկա, մարդ մօրը մենակ կը թողնի՞ եւ կը գաչ էս հեռու երկիրը, իրաւ որ ապերախտ զաւակ եմ, մայրս երբեք ինձ չի ների.

-Ի՞նչ է եղել պրն. Ռուբէն.

-Մայրս կաթուած է ստացել, տարել են հիւանդանոց.

-Աստծով լաւ կը լինի.

-Կ'ուզեմ, որ մամաս առողջ մնայ, էս տարի որ Թեհրան եմ գնում, տեսնեմ իրեն:

Մայրս է մտապատկերումս իր անցելով ու իմ յուշերով, Բեհշթաբաբի եւ Նարմաքի մեր ընտանեկան կեանքը, թէ նա ինչպէս ժրջան նահապետական տան գործերին էր հասնում, մեծից-պոքիկին ծառայում էր տարբերութիւն չդնելով: Մայրս կարծես երկաթէ կազմուածք ունէր, նրան չտեսայ հիւանդ պառկած, միայն վերջերս սկսեց արեան ճնշումից նեղանալ, երբեմն սկսում էր գլուխը պտտել եւ սիրտ թափել, որի համար անմիջապէս բժշկի էի հասցնում, իրեն վերադառած ու թեթեւացած տուն էինք վերադառնում, այս յուշերի օղակներում անցեալն էի պրպտում, երբ հեռախօսի հեղակարծ կանչը սթափեցրեց ինձ.

-Այլօ, համեցէք, լսում եմ.

-Հայ - Ամերիկեան տարեցներ ի միութիւն.

-Այո՛, համեցէք.

-Ես ծերահասակ մարդ եմ, անունս...ես առանձին կ'ապրիմ կոր, օգնութեան կարիք ունիմ, ինչ կ'ըլլայ եաւրում ինձ օգնէք.

-Յարգելի՛ պարոն, սխալ հասցէի էք դիմել, դուք անմիջապէս

գանգէք 911 համարով, կը գան եւ ձեզ կ'օգնեն, չմոռանաք, թիւը սա է...

ԱՄՆ-ում լքուած եւ մենակեաց ծերունիներ շատ-շատ են, լաւ է որ նրանք գտնուում են պետութեան խնամքի եւ հոգատարութեան ներքոյ, եթէ ոչ ինչ պիտի լինէր նրանց վիճակը:

Աշխատանքի ժամը աւարտուել էր, տուն մեկնելու վրայ էի, երբ Թաղէտն ինձ մօտենալով առաջարկեց.

-Պրն. Ռուբէն արի՛, գնա՛նք, մեր տուն ճաշենք, կը գանգեմ չէլլօքաբաբ բերեն.

-Շնորհակալ եմ Թաղէտս ջան, էսօր տրամադրութիւն չունեմ, անհանգիստ եմ մամայիս անորոշ վիճակի համար, կ'ուզեմ առանձին լինել, տեսնեմ ինչպէս կարող եմ եղբորս այս հեռու-հեռուից օգտակար լինել:

Թաղէտին հրաժեշտ տալով մտամոլոր ճամբայ եմ ընկնում դէպի տուն: Ամառայ շոգ օր է, կրակ է թափուում վերից, թախիծն է պատել ինձ, անզգայ արեւի կիզիչ շողարձակումին քայլում եմ հանրակառքի կանգառը, ոչ մի բան ոչ հետաքրքրում է, ոչ էլ ուշադրութիւնս է գրաւում, միայն ու միայն մայրս է աչքիս առջեւն ու հիւանդանոցում մօրս ծանրաշունչ մարմինը, մտածում եմ ու մտածում, թէ ինչ կարող եմ անել այս աշխարհի ծէրը ընկած երկրից, տեսնում եմ ոչինչ, միայն կարող եմ Աստուծոյ ապաւինել եւ առողջութիւն խնդրել մամայիս համար, այսպէս մտորումների մէջ երբ ուշքի եկայ, տեսայ Բրանդ Պողոտայից կանգառներ ետեւս թողած քայլել եմ:

Անհամբեր սպասում եմ գիշեր լինի, որ գանգեմ եղբորս, Գլէնդէլի գիշերը գուզադիպում է Թեհրանի առաւօտուան 1.30 ժամ տարբերութեամբ, լուր ստանամ մամայի վիճակի փոփոխութեան մասին, Օննիկը ինչ է արել նրան կեանքին վերադարձնելու համար: Մտահոգ ու անտրամադիր վերջապէս ձեռքս գնում է դէպի հեռախօսը:

Հեռախօսը երկար գանգում է, վերջապէս Օննիկը ընկալուչը վերցնում է եւ քնաթաթախ տեղեկացնում է՝ -Մամայի վիճակը անփոփոխ է, բայց բժշկական հոգատարութեան ներքոյ է գտնուում: Յիշելով մամայիս կրկին անգամ ուղեղս առաջնորդում է դէպի անցեալի ուղիները, աչքերիս առջեւ են գալիս նրա բարոյական արժանիքները՝ հաւատարմութիւնը իր ամուսնական կեանքին եւ նուիրուածութիւնը ընտանեկան կարգ ու սարքին, ոչ մի բան չխնայեց եւ չզլացաւ մեր երեխաներիս կենսական հարցերում, թխսմօր պէս իր ճուտերին էր հոգ տանում, բերանի պատառը մեզ կերցնելով: Միտքս մինչեւ գիշերուայ ուշ ժամին չդադարեց մօրս մասին մտածելով միշտ ականջալուր հեռախօսին:

Առաւօտն է բացուել, Յուլիս 14 շաբաթ օր է, երկիրքը ծածկուած է ամպերով, ամռան եղանակ եւ այսպէս ամպակալած երկիրք, տարօրինակ է թուում ինձ, սակայն անուշադիր աշխատանքի եմ գնում՝ մտքումս որոշած գանգել եղբորս մամայի մասին լուր իմանալու համար: Վերջապէս յաջողում եմ կապուել Օննիկի հետ, նա տեղեկացնում է, թէ.

-Մամայի վիճակը նոյնն է ինչ որ մէկ օր առաջ, նա մինչեւ ուշքի

ԱՄԵՂՈՒ -ԱՄԻՂԱ- ԱՄԻՂ(ԴԻԱՐԲԵՔԻՐ)

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

«Ասպարէզ» օրաթերթի 2016թ. ապրիլի 10-ի թիւով ներքոյիշեալ յօդուածն է հրատարակուել՝

«Երեւոյի տնտեսական համալսարանի Վարդանանի անվան Վարդանանի ֆակուլտետի 10-ի թիւով ներքոյիշեալ յօդուածն է հրատարակուել՝

«Ասպարէզ» օրաթերթի, շահեկան նկատելով Պոլիս հրատարակուող «Մարմարա» օրաթերթի լրատուութիւնը, զայն փոխանցել է ամբողջութեամբ:

Ըստ «Մարմարա» օրաթերթի, տեղւոյնկարգ մը լրատուագրութիւններ հրատարակել էին լուր մը, ուր պնդուել էր, որ Դիարբեքիր-ի, (մէջ բերուած է որպէս Տիարբաքր) հայկական անունը Ամէտ է: Մարմարա օրաթերթը այն սխալ էր համարել, պնդելով որ նրահայկական անունը Տիարանահերտ է, իսկ Ամէտը նրա քրտերէն անունն է:

Ըստ «Հայկական Սովետական Հանրագիտարան»-ի (հատոր 3, էջեր 375-376) Դիարբեքիր անունը նշանակում է՝ դիար- երկիր, իսկ բաքր՝ արաբ. անուն-ցեղանուն: Հաւանաբար, նրա տարածքը նուաձած արաբ ցեղի առաջնորդը այն անուանել է իրեն կամ արաբ ցեղի անունով, որպէս Բաքր-ի երկիր: Դիարբեքիրի պատմական անունը՝ ԱՄԻԹ-ԱՄԻԴ է: Այն գտնուում է Մեծ Հայքի Չորրորդ Հայք նահանգում՝ Տիարբիս գետի աջ ափին: Նրա հիմնադրման ժամանակը անորոշ է: Մ.թ.ա. 2-րդ հազարամեակի վերջին, աքքատական արձանագրութիւններում այն յիշատակուում է Ամեղուանունով: Այդպէս էլ հուշակոթողը պատմաբան՝ Մարտիրոս Գալուսեանը իր աշխատութիւնում, այն մէջ բերել է որպէս՝

Ամեղու կամ Ամիդա (Դիարբեքիր) անուանումով քաղաք: IX-VII դարերում, Արմինա- Արարատեան թագաւորութեան գերիշխանութեան տակ է գտնուել, մասնակցել ասորեստանեան իշխանութեան դէմ պայքարին: Մ.թ.ա. 330 թուականին, այն նուաձել է Ասորեստանի Թալատպալասար III թագաւորը: Մ.թ.ա. VII դարի վերջին, Ասորեստանի իշխանութեան անկումից յետոյ միացուել է Արմինա երկրի Երուսաղէմի թագաւորութեան տարածքին:

Մ.թ.ա. 37 թուականին, ԱՄԵԴՈՒ-ԱՄԻԴԱ(ԴԻԱՐԲԵՔԻՐ)-ը անջատուել է Արտաշեսեան թագաւորութեան Մեծ Հայքի տարածքից: Պարթեւա-հռոմէական համաձայնագրով միացուել է Պարթեւաստանին ենթակայ մի գաճաճ թագաւորութեան տարածքին: Մ.թ. 298 թուականին այն նուաձել է Հռոմը: Դիարբեքիրին փոխնի-փոխ տիրել են պարսիկները, Բիւզանդացիները, արաբները, քրտերը, սելջուկ թուրքերը, թաթար-մոնղոլները, թուրքմէնները: Շահական Պարսկաստանի դէմ մղուած պատերազմում, Դիարբեքիրը անցել է Օսմանեան տիրապետութեան տակ:

ԱՄԵԴՈՒ -ԱՄԻԴԱ(ԴԻԱՐԲԵՔԻՐ) -ի մասին վերոյիշեալ համառօտ տեղեկութիւնը մէջ բերելով, այն թերի պիտի լինէր առանց յիշատակելու նրան պարսկական պաշտպանական ամրութիւն-պարսկապիմասին: Դիարբեքիրի շրջակայքի ամրութիւնները ունեն 8 կիլոմէթր երկարութիւն, 10 մէթր բարձրութիւն եւ 5 մէթր լայնու-

թիւն: Այն չինական պարսկացից թէեւ հարիւր անգամներ նուազ երկար է, սակայն, հին աշխարհի պաշտպանական երկար ու հզօր ամրութիւններից է: Արամ-Արամէի Արմինա թագաւորութեան Սարտուրի Ա. հզօր արքան նման ամրութիւններ է կառուցել Տուշպաւան ուստանի շուրջը, զայն թշնամիների յարձակումներից պաշտպանելու համար: Պարսկացի ճակատին արձանագրել է իր յաղթական ճակատամարտերի ու արարումների վկայութիւնները: Ո՞ր Արմինա-Հայք չի հիացել իր նախնիների Անի փառաշքեղ ուստանի Սմբատաշէն պարսպների տեսքով, որոնք դարերի դէմ սէզ կանգնած հիացմունք պատճառում անցորդներին:

Դեռեւս հիմնականում կանգուն է Դիարբեքիրը շրջափակած պարսպը: Մի կողմից այն յարում է՝ այժմաներակ հնագոյն բերդին, միւս կողմից՝ Տիարբիս գետի տանակաւար կամրջին: Պարսպը ունեցել է 72 բարձրաբերձ ու կիսաբոլոր աշտարակներ, 4 մետաղակոշտ դարպասներ: Դիարբեքիր-ում է գտնուում, այժմ նորոգուած, եօթ խորանի Սուրբ Կիրակոս սքանչելի եկեղեցին, որտեղ առանց սահմանափակման յաճախակի Սուրբ Պատարագ է մատուցուում: Դիարբեքիրի ամրութիւնները կառուցուել են միմեանց ազուցուած վիթխարի քարերով: Դուք տեսե՞լ էք Արցախի հանրապետութիւնում Տիարանահերտի պեղումների պարսպների պատերի իրար ազուցուած հսկայ քարերի անշաղախ շարուածքը . . . խիստ նմանութիւն կայ երկու քաղաքների պարսպների պատերի շինարարական կառուցումը... եւ ինչո՞ւ է հաստատուել, որ Դիարբեքիրի պարսպների պատերի շարուածքը Արմինա-հայերի կառուցողական հմտութեան արգասիքն են եւ արդեօ՞ք այն Արմինա-հայերի կառուցումը է:

Արմինա-հայեր իրենց աւանդուած, թէ աւանդական պատմութիւնը, Դիարբեքիր-ի ամրութիւնների կառուցումը վերագրել են Տիարանահերտի Տիարանահերտի (մ.թ.ա. VI դարի առաջին կէս), որի անունով էլ Հայ պատմիչները զայն անուանել են նաեւ Տիարանահերտ: Սակայն, Պատմագիտութեան մէջ Դիարբեքիրը Ամեղու անունով յիշատակուել էր դեռեւս մ.թ.ա. 2-րդ հազարամեակին, երբ Աստուածամարդ Հայկ Նահապետի զարմից Արմինա երկրում տիրակալում էին քաջ արքաներ: Դիարբեքիրը Տիարանահերտ կոչելը Հայ պատմիչների շփոթմունքն է՝ Մեծ Հայքի Աղձնիք նահանգում Արտաշեսեան արքայատոհմից՝ արեւելքի մեծահզօր արքաների-արքայ Տիարան Բ.-ի հիմնադրած Տիարանահերտի հետ:

Տիարան անուն, իրանական ցեղերի հնդեւրոպական լեզուից փոխառութիւն է, այն առաջին անգամ յիշատակուել է որպէս քեմենեանների տոհմի Քսերքսէս թագաւորի բանակի առաջնորդ: Դիարբեքիր-ի ամրութիւնների կառուցումին վերագրուած Տիարանը՝ Երուսաղէմի թագաւորական տոհմի Երուսաղ Ա. Սակաւակեաց արքայի որդին է: Թերի կը լինէր նաեւ այս պատումը, եթէ Պատմահայր Մովսէս Խորենացու խօսքը նրա մասին չի յիշատակէինք: Յոյն պատմիչ, զօրավար Քսէնոֆոնը իր «Կիւրոպեդիա» աշխատութիւնում յիշատակել է որոշ մանրամասնու-

թիւններ արմինների ու պարսիկների եւ Արմինա-յի թագաւորի որդի Տիարանի մասին: Երուսաղ Ա. Սակաւակեաց թագաւորը, շրջանում տիրող դէպքերի բերումով, սկսել էր չկատարել Մարաստանի հանդէպ ստանձնած հարկային եւ այլ պարտաւորութիւնները: Պարսկաստանի արքայ Կիւրոսը նուաձել էր Մարաստանը, պահանջել Երուսաղ Ա.-ի պարտաւորուած հարկերը վճարել իր երկրին: Երուսաղ Ա. թագաւորը, ընտանիքի անդամներին ապահովելու նպատակով, երկրի բանակը դիրքաւորում լեռների լանջերին:

Նկատելով, որ շրջապատուած է Կիւրոսի բանակի կողմից, իջնում իր բանակատեղիից, ներկայանում նրան: Նրանց միջեւ տեղի են ունենում բանակցութիւններ: Կիւրոսը պահանջում է արմինների թագաւորից ինչո՞ւ է չէր կատարել ստանձնած պարտաւորութիւնները: Երուսաղ Ա. թագաւորը պատասխանել էր՝ «Ուզում էի ազատութիւն ձեռք բերել եւ այն թողնել իմ որդիներին»: Երուսաղ թագաւորի որդի Տիարանը, ուղեւորութիւնից վերադառնալով տեսել էր շրջապակապիտը, հօրը, պատիւագնուական մարդկանց: Տիարանը, զգալով հօրը սպառնացող վտանգը, բանավիճում Կիւրոսի հետ, պերճախօս ատենաբանութեամբ պատճառաբանում հօրը ազատ ապրելու կամքի ցանկութիւնը, Կիւրոսին յուզիչ հարցադրումներ առաջարկելով յաջողում է պատժից ազատել Երուսաղ հօրը: Յայտարարել, որ հօրը կրած պարտութիւնը նրան խելօք է դարձրել եւ որ՝ «Երկիւղը մարդկանց աւելի է պատժում քան իրական պատիժը»: Բանավիճի ընթացքում Կիւրոսը յիշատակել է՝ ինչպէս էին միասին որսորդութեան գնացել եւ ինչպէս էր Տիարանը աւելի հմուտ նետ ու աղեղ օգտագործել եւ որ ինք յարգանք է տածում իր հին ընկերոջ նկատմամբ: Արմինա երկրի ու Պարսկաստանի միջեւ դաշինք է կնքուում: Արմինայի Երուսաղ թագաւորը, այլ զիջումների հետ, պարտաւորուել նաեւ երկրի զօրաբանակից 4000 «այր ու ձի» եւ 20000 հետեւակ զօրք տրամադրել Կիւրոսի ռազմական գործողութիւններին եւ հատուցել Բաբելոնը նուաձելու Կիւրոսի կատարելիք ծախսերը: Երուսաղ թագաւորը բացառապէս է երկրի գանձարանի 3000 տաղանդ հարստութեան չափը (այժմեան 66,240,000 դոլար): Երկրի աւանդական սովորութեան համաձայն այն պահեստաւորուած էր եղել Տուշպաւան Վանաձորի ստորջրեայ քարայրում: Նոյն գիշերը, Կիւրոսը իր բանակատեղիում խնձոյք էր կազմակերպել: Ընթրիքի ատեն տեղի ունեցած զոյցի ընթացքում Կիւրոսը հարցրել էր Երուսաղ թագաւորին՝ ի՞նչ պիտի տար իր կնոջն ու զաւակները ազատութեան համար: Թագաւորը պատասխանել էր, այնքան ինչքան որ կը կարողանար: Կիւրոսը շրջուելով դէպի Տիարանը, հարցրել էր ինչքան կը վճարէր իր կինը տալու համար: Երուսաղեան Տիարան, որ նոր ամուսնացած էր եղել, անչափ սիրել էր կնոջը, ոտքի կանգնելով յանդուգն խօսքով կանչել՝ «Կիւրոս, կեանքս կը տայի գերութիւնից նրան ազատելու համար»: Ինչքան աղուոր է նրա խօսքը, այդպէս էլ իրենց Արա Գեղեցիկ արքան մերժել Ասորեստանի թագաւոր լինելու պատիւը, Նուարդ կնոջ համար պատերազմի էլել, գոհուել ... այդպէս էլ Մուսա-

ների Լեոնան լանջերին կուռի ելած Արմինաներ ասացին, որ կուռի են ելնում իրենց կանանց պատուի համար... : Ինչքան աղուոր հերոսական, պատուախնդիր դրուագներ կան Արմինա-հայերի պատմութեան քառուղիներում, ո՞ր իմաստունը այն պիտի պեղի, հաւաքի մի մատենուում, որ աշխարհին իրենց ցեղի իմաստութիւնը պարզեւէին: Արմինաների պատմութիւնը ոչ միայն Հայկ Նահապետից ու Արատտա երկրի (Մեծամօր ուստան) արմինների պատմութիւնից է սկսում, այլ հազար-հազար տարիներ առաջ «է» -ի արարած երկիրն է, որին աշխարհը «դրախտ», «դրախտիկ երկիր» են անուանում: Հայոց «Աստուածաշունչ» իրենց պատմութիւնն է ...:

Երուսաղ Ա. Տիարանը, Արմինա երկրի զօրաբանակը գլխաւորելով, Պարսկաստանի Կիւրոսի հետ արշաւել է Բաբելոն, նուաձել այն: Կիւրոսը յայտարարել, որ այլ ցեղերի գերեւորուած մարդիկ թող իրենց երկրներ վերադառնան: Հրեայ ցեղի բազում մարդիկ էին Բաբելոնում գերավարուած, Կիւրոսի կոչով վերադարձել էին իրենց երկիր: Նրանց զարմից մարդիկ հիմա յայտարարում են, որ Կիւրոսը իրենց փրկարարն էր, առանց յիշատակելու Արմինա Տիարանին: Հաւանական է, որ Կիւրոսը միայն պարսկական բանակով չկարողանար նուաձել Բաբելոնը: Պատմահայր Խորենացին վկայում է Տիարանի մասին որ՝ «Եւ ո՞ր իսկական մարդը, որ համակրում է արիական բարքի եւ խոհականութեան չի զուարճանայ սրա յիշատակութեամբ եւ չի ձգտի նրա նման մարդ լինել»: Իսկական Տիարանահերտ-ը գտնուում է Ամեղու կամ Ամիդա (Դիարբեքիրից հեռու հիւսիսի տարածքում): Ուրիշ տեղ, ուրիշի հետ մի շփոթէք այն: Արտաշեսեան գահատոհմի Տիարան Բ. արքայի նոր աթոռանիստն էր: Տիարան, մ.թ.ա. 95-54 թուականների Արմինա-Հայաստան աշխարհի արքայ, արեւելքի արքաների-արքան էր: Արմինա-հայերի գէնքի փառքն էր, հազար-հազար տարիներ յաղթ անցնում է պատմութեան բաւիղներով: Եւրոպա մայրցամաքի իմաստուն երգահաններ, 24 օպերաներ են արարել, նրա փառքը երգով ու նոսրաբանների յաղթ հնչիւններով երկիր մոլորակի մարդկանց տանելու: Երկրի աթոռանիստ ուստան Արտաշատը աշխարհակալ երկրի ծայրամասին էր, կայսրութեան առանձին շրջանների հետ վարչական կապերը դիւրացնելու համար անհրաժեշտ էր մայրաքաղաք փոխադրել աւելի կեդրոնական շրջաններ: Նրա կառուցման վայրը ընտրել էր Աղձնիքը: Տիարան արքան Աղձնիքն էր ընտրել որպէս մայրաքաղաքի կառուցման վայր՝ «Ազգային զգացումների մղումով, ազգային զգացումների թելադրանքներով՝ որպէս արմենական սուրբ ու մայր հող, որպէս հարազատ ու վստահելի միջավայր» գրել էր հրաշալի ու իրաւ Հայ պատմաբան՝ Մարտիրոս Գալուսեանը: Իր ցեղի նախնիներ՝ Սուբարտու ու Միտանի իշխանութիւնների տարածքում էր այն: Տիարանահերտ, արեւելքի շքադադոյն քաղաք, արեւելքում հելլենիստական մշակութի ճշգրտակար կեդրոններից էր: Տիարանահերտից մինչեւ Արտաշատ հարիւր-հարիւր հազար մեթրանոց երկար ճանապարհ կառուցեց: Ընթրիցոյդ, նայիր սիւնին կից քարտէսին, Ամի-

ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՉԱՓԻ ՄԷՋ ՕԳՏԱԿԱՐ Է...

Բարկութիւնը մարդկային բնական զգացում է, որուն հետ մենք կ'առնչուինք ժամանակ առ ժամանակ, անկախ անկէ, որ անիկա մեր բարկութիւնն է, թէ՛ ուրիշի: Յաւօք սրտի, բարկութիւնը յաճախ սխալ կ'ընկալուի: Շատ մարդիկ կը մտածեն, թէ բարկութիւնը քայքայիչ զգացում է, սակայն կան մարդիկ, որոնք բարկութեան կը վերաբերին, իբրեւ կառուցողական զգացում:

Բարկութիւնը ինքնին օգտակար, կարեւոր եւ Աստուծոյ տրուած զգացում է, սակայն միայն այն պարագային, երբ անիկա յստակ սահմաններու մէջ է եւ կառավարելի: Անիկա կը նպաստէ մարմնին յաղթահարելու դժուար իրավիճակներ, կը բարձրացնէ ատրենալիսի քանակը արեան մէջ: Շատ պարագաներու մարդիկ բարկութիւն կը համարեն միայն բուռն դրսեւորուած վարուելակերպը, սակայն անիկա կրնայ արտայայտուիլ լուրջութեամբ, եւ այս պարագային եւս մարդը կրնայ կրկին ըլլալ բարկութեան գերին եւ յետագայ քայլերը կը թելադրուին բարկութեամբ: Անիկա ունի նոյնքան վնասակար ազդեցութիւն մարմնի վրայ, որքան եւ արտայայտուած բուռն բարկութիւնը: Համաձայն բժշկական հետազոտութիւններու՝ բարկացող մարդիկ աւելի հակուած են սիրտ-անօթային հիւանդութիւններով տառապելու, քան այն մարդիկ, որոնք կրնան կառավարել բարկութիւնը: Նաեւ բարկութիւնը կը նպաստէ խոցի, շատակերութեան, ընկճախտի, անքնութեան զարգացման:

Բարկութիւն յառաջացնող պատճառները բազմաթիւ են, հարազատի կորուստ, յոգնածութիւն, ցաւ, սով, ալքոլ, որոշ դեղերու ընդունում, ժամկէտներ, խճողումներ, ձախողութիւններ, նախադաշտանային համախտանիշ, հիասթափութիւններ, նիւթական խնդիրներ եւ այլն: Եթէ իմանանք պատճառները, կրնանք որոշ չափով նուազեցնել նաեւ բարկութիւնը: Սակայն ոչ միշտ կրնանք խուսափիլ բարկութեանէն եւ յաճախ մեր առջեւ դրուած խնդիր է ոչ թէ չբարկանալը, այլ բարկութիւնը կառավարելը: Բարկութեան կառավարման համար անհրաժեշտ

է նախ եւ առաջ միտքի նորոգութիւն, անիկա պէտք է լուծուի մարդու միտքի մակարդակին մէջ եւ այնուհետեւ բժշկուած միտքը կ'անդրադառնայ վարուելակերպի եւ յետագայ ապրելակերպի վրայ:

Բարկութեան կառավարման համար մշակուած են շարք մը գործնական խորհուրդներ, այն է՝ ա) Հասկցիր, որ բարկութիւնը խոցելիութեան նշան է, անիկա կը յառաջացնէ արժեզրկուածութեան զգացում:

բ) Երբ բարկացած ես, մտածէ կամ ըրէ այնպիսի բան մը, զոր ընելով դուն քեզի պիտի զգաս արժէքաւոր կամ գնահատուած:

գ) Մի՛ վստահիր դատողութեանդ, երբ բարկացած ես:

Բարկութիւնը կը մեծցնէ միայն ինդրի բացասական կողմերը:

դ) Փորձէ տեսնել ինդրը տարբեր տեսանկիւններէ:

Բարկութիւնը կը նեղցնէ եւ կը կարծրացնէ մտածելակերպը եւ թոյլ չի տար, որ նայինք ինդրին ամբողջական կերպով:

է) Փորձէ հասկնալ այլ մարդոց տեսակէտները: Երբ բարկացած ես, կը կարծես, որ ամէն ինչի մէջ մեղաւորը դիմացի անձնաւորութիւնն է:

զ) Մի՛ արդարացնէր բարկութիւնդ:

է) Ճանչցիր ֆիզիքական եւ մտային կարողութիւններդ:

Աւելի յաճախ մարդը կը բարկանայ, երբ յոգնած է, անօթի է, հիւանդ է, տագնապի մէջ է, եւ այլն:

ը) Կեդրոնացիր բարելււածման եւ վերականգնման, քան քննադատութեան վրայ: Դժուար է մնալ բարկացած եւ ոչ մէկը մեղադրել, բայց աւելի դժուար է մեղադրել, երբ կեդրոնացած ես բարելււածման եւ կառուցման վրայ:

թ) Կեդրոնացիր ինդրի լուծման, ոչ թէ միայն ինդրի վրայ:

ժ) Գիտցիր, որ «ես» բառը աւելի կառուցողական է, քան «դուն» բառը: Օրինակ, «ես այս հարցին այլ ձեւով կը նայիմ, անիկա կը բարկացնէ զիս: Կրնա՞նք միասին նստիլ եւ խօսակցիլ» աւելի լաւ է, քան «ինչո՞ւ դուն այս հարցը ներկայացուցիր»:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ՕՐԱԿԱՆ ՄԷԿ ՎԱՅՐԿԵԱՆ ՄԵՐՍԵՅԷՔ ԶԵՌՔԻ ՄԱՏՆԵՐԸ

Ձինական բժշկութիւնը քանի մը դարով աւելի առաջ է, քան անդամագնական (anatomical) գիտութիւնը: Ձինական բժշկութեան ճիւղերէն մէկուն իմաստը այն էր, որ մեր մարմնի իւրաքանչիւր կէտ կապուած է որեւէ գործարանի հետ: Հետեւաբար՝ այս կէտերը մերսելով՝ կը բարելւակենք այդ գործարանին վիճակը: Օրական մէկ վայրկեանը բաւական է:

Ըստ չինական բժշկութեան՝ մեր ձեռքի մատները պատասխանատու են որոշ գործարաններու համար:

Բթամատ - Բթամատի վրայ տեղակայուած կէտերը պատասխանատու են սրտի եւ թոքերու համար: Սրտի զարկը կրնաք կարգաւորել՝ բթամատը մերսելու միջոցով:

Յուցամատ - Այս մատը պատասխանատու է ստամոքսաղիքա-

յին աշխատանքին համար: Որովայնի ցաւերը, մարսողական խնդիրները կրնաք դիւրութեամբ յաղթահարել՝ ցուցամատը մերսելու միջոցով:

Միջնեմատը պատասխանատու է արեան շրջանառութեան համար: Սիրտխառնուքի, գլխապտոյտներու կամ անքնութեան պարագային մերսելէք միջնեմատը:

Մատնեմատ - Այս մատը կը կարգաւորէ մեր տրամադրութիւնը: Եթէ անտրամադիր էք, ուրեմն անհրաժեշտ է մերսել այս մատը:

Ճկոյթ - Այս մատը մերսելով՝ կրնաք բարելուել երիկամներուն աշխատանքը եւ թեթեւցնել գլխացաւերը: Ձինաստանի մէջ երիկամներու հիւանդութիւններ ունեցող հիւանդներուն, իբրեւ կանոն, խորհուրդ կը տրուի ճկոյթի կանոնաւոր մերսելմանը:

ՎԱՌ ԳՈՅՆԵՐ՝ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՅԱՄԱՐ

Գիտնականները իրենց ուշադրութիւնը արդէն երկար ժամանակ է, որ կեդրոնացուցած են հետազօտելու, թէ գոյները ինչպէ՞ս կ'ազդեն մարդու վրայ:

Անոնց կարծիքով՝ տեսողական աշխարհընկալման մէջ շատ կարեւոր դեր կը խաղայ գոյնը: Բժշկութեան, մասնաւորապէս՝ հոգեբանութեան մէջ, յաճախ կ'օգտագործուի գոյներու միջոցով բժշկութիւնը:

Գոյնային ճիշդ երանգները շատ լաւ կ'ազդեն ջղախիւս համակարգին վրայ, նոյնիսկ աւելի լաւ, քան շատ դեղերը:

Հետազօտութիւնները ցոյց տուած են, որ կարմիր-նարնջագոյն գոյնին երկար նայողներու զարկերակը կ'արագնայ, շնչառութիւնը աւելի յաճախակի կը դառնայ, կը բարձրանայ ճնշումը: Գոյն կապոյտ երանգներուն երկար նայողները իրենք գիրենք աւելի լաւ կը գան:

Գիտնականները նաեւ ապացուցած են, որ այս կամ այն գոյնի բացակայութիւնը շատ վատ կ'ազդէ մարդոց վրայ: Օրինակ, առողջ եւ ուրախ ապրելու համար պէտք են վառ գոյներ:

Այդպիսի գոյներն են, որ մարդուն կու տան ստեղծագործական ուժ: Աշնան ընթացքին մարդիկ կը զգան «գոյնային պակաս», կանաչի բացակայութիւն, փոխարէնը յաճախ կը տեսնեն գորշ ամպեր եւ անգոյն ցեխ: Ընկճախտը, անքնութիւնը եւ մշտական յոգնածութիւնը

կրնան ըլլալ գոյներու պակասի հետեւանք: Իսկ ընկճախտը կը յառաջացնէ շարք մը հիւանդութիւններ: Այդ պատճառով պէտք է գիտնալ գոյնի ու հոգեբանութեան մասին: Մարմնի լաւ աշխատանքին համար պէտք է, որ գոյնային տեսողութեամբ ստացուի մօտ 80% տեղեկութիւնը: Գոյնութիւն ունին նաեւ յատուկ կեդրոններ, որոնք կը վերծանեն գոյնային տեղեկութիւնը: Եւ այսպէս՝

Կարմիր գոյնը կը բարելուէ մորթի գոյնը, կ'ունենայ բուժիչ ազդեցութիւն կաթուածներու պարագային:

Նարնջագոյնը ունի երիտասարդացնող յատկութիւն, կը բարելուէ նիւթափոխանակութիւնը, կը բարձրացնէ արտոթակը, կ'օգնէ պրոն-շիթի եւ ասթմայի ժամանակ:

Կանաչը դրականօրէն կ'ազդէ գլխացաւերու ժամանակ:

Դեղինը կը կարգաւորէ ստամոքսի աշխատանքն ու ջղախիւս համակարգը:

Կապոյտը կ'իջեցնէ արեան ճնշումը, կը տկարացնէ զարկերակը, գլխացաւը եւ արտոթակը:

Երկնագոյնը կ'օգնէ օսթոխոնո-րոզի ժամանակ:

Ճերմակ գոյնը բուժիչ ազդեցութիւն կ'ունենայ կեդրոնական ջղախիւս համակարգին վրայ:

Հոգեկան եւ ջղախիւս հիւանդութիւններու պարագային կ'օգնէ մանիշակագոյնը:

ԻՆՉՊԵՍ ԱԶԱՏԻԼ ՆԱԽԱՆՁԻ ԶԳԱՅՈՒՄԵՆ

Մեր միտքերը կը տանին գործողութիւններու, իսկ այդ գործողութիւնները՝ սովորութիւններու, որոնք կը դառնան բնաւորութիւն: Ամէն ինչ կը սկսի մեր վերաբերմունքին ու գիտակցութեանէն: Մեր ենթադրութիւնները եւ սպասումները ունին զարմանալի ունակութիւն՝ անոնք կ'իրականանան:

Ինչէ՞ն կը յայտնուի նախանձը.

1. Անինքնավստահութենէն. Եթէ դուք ձեզ չէք սիրեր, ուրիշները նոյնպէս չեն կրնար սիրել ձեզ: Սիրեցէք եւ գնահատեցէք դուք ձեզ: Իւրաքանչիւր մարդ իւրապատուկ է, եղէք այնպէս, ինչպէս որ էք:

2. Անվստահութիւն. Ինչպիսի՞ յարաբերութիւններու մասին կարելի է խօսիլ, եթէ չկայ վստահութիւն: Սկսեցէք վստահիլ եւ մի սահմանափակէք ազատութիւնը:

3. Ինքնահաստատում. Եղէք անկախ, աշխատեցէք, զբաղեցէք սիրած գործով: Ատիկա կ'օգնէ ձեզի ազատելու միտակ մնալու վախէն:

4. Ապրեցէք ներկայով. Պէտք է այսօր ապրիլ անոր համար, որպէսզի նկատէք շրջապատող երաջանկութիւնը: Երէկուան օրը ետ չէք կրնար բերել, իսկ վաղը կրնայ եւ չգալ:

5. Արտաքին. Դուք պէտք է

միշտ այնպիսի տեսք ունենաք, որ ձեզի համար հաճելի ըլլայ նայիլ հայելիին: Տղամարդիկ աչքերով կը սիրեն:

6. Համեմատութիւն. Կեդրոնացէք ձեր յաջողութեան վրայ, այլ՝ ոչ ուրիշի: Դուք չէք գիտեր ուրիշը ինչպէս կ'ապրի, մի փորձէք նմանիլ ուրիշին:

7. Մի կեդրոնանաք տահաճ միտքերու վրայ. Փորձեցէք ազատիլ անոնցմէ: Բացասական միտքերը կը վատացնեն ձեր վիճակը:

8. Յրուեցէք. Լրտեսութիւնը կը վրդովեցնէ ձեր գուզընկերը եւ իրավիճակը աւելի կը վատանայ: Եթէ ցանկանան ձեզ խաբել, տարբերակ կը գտնեն, իսկ եթէ ատիկա ընդամենը ձեր կասկածանքներն են, ուստի ատկէ կը վատանան յարաբերութիւնները:

9. Նախանձի աղբիւր. Մնացէք դուք ձեզ հետ եւ մտածեցէք ինչէն սկսած էք նախանձիլ: Եղէք անկեղծ դուք ձեզի հետ:

10. Խօսեցէք գուզընկերով հետ. Խօսակցութիւնը պէտք է անպայման հանգիստ ըլլայ: Դուք պէտք է պատմէք, թէ ինչ կը զգաք եւ ինչէն սկսան յարաբերութիւններուն մէջ ձեզ բերը:

«ԱԼ ԿՐ ԲԱԻԷ»

Շարունակուած էջ 7-էն

Նոյեմբեր 2015-ին Պրենի Սանտրըզը հռչակուեցաւ Ամերիկայի ամենէն ժողովրդական ծերակուտականը (popular senator)՝ գինք ընտրողներու 83%-ին հաւանումի աստիճանով: Եւ թէեւ ճիշդ է ու տարակոյս չկայ թէ ընդունելի չէ ընկերավարական նախագահի մը ընտրութիւնը Ամերիկայի պէս դրամատիրութեան օրրան երկրի մը մէջ, սակայն շատ բանի մէջ յաճախ

առաջատար Ամերիկան, իր մարդկութեան տուած առաջին յեղափոխութեամբ (1776) եւ կէս դար առաջ սեւամորթ նախագահ ընտրելու անընդունելի իրականութիւնը շրջելով գայն ընդունելի դարձուցած այս հսկան, կրնայ անընդունելին ընդունելի դարձնել եւս այս անգամ, զարմանք պատճառելով Դեմոկրատ թէ Հանրապետական հարուստին ծառայող կուսակցական շրջանակներուն, եւ ի զարմանս ապշահար մարդկութեան:

ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ Մարտ **Մարտ 21 -Ապրիլ 19**
 Բամբասանք ընել երբեք չես սիրեր եւ ամէն բան սիրով կ'ընդունիս: Դամակարգիչիդ վրայ շատ ժամանակ կ'անցնես եւ աչքերդ կը վնասես: Գործիդ մէջ քանի մը ըրած սխալներուդ պատճառաւ՝ կրնաս գործող դուրս ձգուիլ: Փոքրիկները սիրէ:
 Բախտաւոր թիւերդ են: 15,19,24,26,33

ՑՈՒԼ Ապրիլ **Ապրիլ20 - Մայիս 20**
 Նախասիրած անձերուդ հետ պէտք եղածէն աւելի ժամանակ կ'անցնես, կարելոր է որ բոլորին առիթ տաս: Նկարագրիդ կարելոր յատկանիշներէն մէկը խորհրդաւորութիւնդ է, որ քեզ կը հեռացնէ ընտանեկան միջավայրէն:
 Բախտաւոր թիւերդ են: 5,11,20,21,30

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ **Մայիս 21-Յունիս 20**
 Գործակիցներուդ վրայ սուտ զրպարտութիւններ մի ըներ որպէսզի անհանդուրժելի դրութեան դիմաց չմնաս եւ վստահութիւնդ չկորսնցնես անոնց քով: Երկար ճամբորդութեան մը նպատակը կը հետապնդես, մանրամասնութիւնները նկատի առ:
 Բախտաւոր թիւերդ են: 8,14,25,27,35

ԽԵՑԳԵՏԻՆ **Յունիս 21-Յուլիս 22**
 Ընտանեկան հարցի մը մէջ խռովութիւններ կան եւ դուն քու կարծիքիդ յամառօրէն կանչած ես եւ արգելք կ'ըլլաս դիմացիիդ որոշումներուն: Դեռաւոր ազգականներուդ հետ շփման մէջ մնացիր: Շաբաթավերջը շատ զբաղ պիտի ըլլայ տունդ ներս:
 Բախտաւոր թիւերդ են: 1,17,24,26,34

ԱՌԻԲԾ **Յուլիս 23-Օգոստոս 22**
 Ուրիշ անձերու մասին խօսիլը շատ կը սիրես եւ չես անդրադառնար որ ան կրնայ կործանարար ըլլալ: Պայման չէ որ գործիդ մէջ պատահած բոլոր անցուդարձերէն տեղեակ ըլլաս: Դանդաղ կ'երեւիս՝ սակայն շատ ջղային բնավորութեան տէր ես:
 Բախտաւոր թիւերդ են: 15,22,23,33,35

ԿՈՅՍ **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
 Կարելոր արտօնագիր մը ձեռք պիտի ձգես որու ամիսներէ ի վեր կը սպասես: Կեանքդ բարեփոխելու համար պէտք է խոնարհ եւ համբերատար ըլլաս: Կառավարական օրէնքները յարգէ որպէսզի տուգանք տալու չստիպուիս:
 Բախտաւոր թիւերդ են: 4,9,15,27,28

ԿՇԻՈՔ **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
 Մարդոց հանդէպ վստահութիւնդ կորսնցուցած ես եւ առանց պատճառի կը հեռանաս անոնցմէ: Տեսարժան վայրեր երթալը շատ կը սիրես եւ գեղեցիկ բնութիւնը դիտելը քեզ շատ կը հանդարտեցնէ: Դուն քեզ զբօսնելու համար գիրք կարդա:
 Բախտաւոր թիւերդ են: 10,16,20,26,28

ԿԱՐԻԾ **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
 Բարեկամներուդ միջեւ բաղդատութիւն մի դներ: Լեզուդ սանձէ չարախօսութիւն ընելէ եւ վնասակար խօսքեր խօսելէ: Մարտահրաւերներու մի ընդառաջէր: Կեանքդ լաւ ընթացքի մէջ է, չ'ըլլայ թէ երեսդ դարձնես կեանքի տուած լաւութիւններուն:
 Բախտաւոր թիւերդ են: 7,12,18,27,31

ԱՂԵՂՆԱԲՈՐ **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**
 Վեճ բռնկեցնող մի ըլլար այլ դուն քեզ պարտադրէ որ խաղաղութիւն ընող ըլլաս: Եղբայրներու միջեւ անհասկացողութեան պարագային՝ մէջերնին մի մտնար, վերջաւորութեան դուն կը զրպարտուիս: Շաբթուայ սկիզբը հիւրեր պիտի ունենաս:
 Բախտաւոր թիւերդ են: 2,17,23,24,34

ԱՅԾԵՂՉԻՐ **Դեկտեմբեր 21-Յունուար 19**
 Դուն քեզ քաջալերէ, միտքդ հանգստացուր եւ ընդունէ թէ քու անմիջական պարագաներդ քեզ շատ սիրելուն համար է որ յաճախ սխալներդ կը յայտնեն: Գոհունակ եւ խոնարհ սիրտ մը ունեցիր փոխանակ ինքնագով ըլլալու:
 Բախտաւոր թիւերդ են: 3,15,28,30,34

ԾՈՎԱՆՈՅՑ **Յունուար 20-Փետրուար 18**
 Թոյլ մի տար որ սիրելիդ օգտագործէ քու բարի կամքդ: Առանց վրդուելու եւ առանց հարցադրելու շարունակէ ընթացքդ: Սուտ խօսքերու մի հաւատար երբ անոնց ճշմարտութիւնը լաւ գիտես: Դուն քեզի աւելի ժամանակ տրամադրէ:
 Բախտաւոր թիւերդ են: 5,15,22,34,35

ՉՈՒԿ **Փետրուար 19-Մարտ 20**
 Մեծ ծրագիր մը պատրաստելու վրայ ես եւ շատ մտահոգ արդիւնքով: Ըլլալիք գործերը բաժնեկցիր քեզի մօտ ամձի մը հետ: Ազատութիւնդ կաշկանդող պարագաներու պիտի հանդիպիս, փորձէ հասկնող ըլլալ եւ վեճի առիթ չտալ:
 Բախտաւոր թիւերդ են: 8,17,24,29,30

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՆ ԺԱՄԱՆՈՒՄ

Շարունակուած էջ 7-էն

Արդեօք բուժելու ենք բոլոր հիւանդութիւնները եւ ինչ ջանքերի գնով, ինչպէ՞ս իրականացնել երազանքները կէս դարում ու տեսական գիտութիւնից անցում կատարել դէպի ժամանակակից բժշկութեան զարգացում: Ահա այս թեմաներով հանրայայտ գիտնականները հինգ օր շարունակ դասախօսութիւններ կը կարդան եւ քննարկումներ կ'անց-

կացնեն, որոնք հասանելի կը լինեն բոլոր ցանկացողների համար: Մինչեւ փետրուարի վերջը մասնակիցների գրանցումն անվճար է:

Բժշկական համալսարանում մեզ հանդիպած ուսանողներից մի քանիսն արդէն հասցրել էին ծանօթանալ հիւրերի կենսագրութեանը՝ արձանագրելով. նրանք էլ են ժամանակին փորձերը սկսել փոքրիկ լաբորատորիաներում, իսկ յետագայում փոխել են աշխարհը:

ՍԱՐԳԻՍ ԹՈՓԱԼԵԱՆ

Շարունակուած էջ 8-էն

Թումի մէջ կը ծնի Թոփալեաններու երկրորդ դուստր՝ Արմենուհին, ապա՝ Վանաձորի մէջ տան չորրորդ մանչը՝ Յակոբը: 1975-ին Ամերիկա տեղափոխուելէ ետք, Սազոն 1989-ին Հայաստան այցելելով կը ծանօթանայ իր կեանքի ընկերուհիին՝ Լուսինէ Յարութիւնեանին: Կ'ամուսնանան եւ կը վերադառնան Լոս Անճելէս, հետագայ տարիներուն կեանք տալով Մեսրոպին եւ Սոնային: Մեսրոպը հօրը՝ Սազոնին աջ բազուկը դառնալով վրայ է «Երեւան» տպարանին մէջ, իսկ Սոնան կ'ուսանի Ռիվերսայտ համալսարանին մէջ:

Սազոնին մաքուր, արժանապատիւ, իր շրջապատին լռիկման ջիւղիկ օգտակար ըլլալու մարդկային ընտիր բնավորութիւնն ու վարքագիծը ամէն գնահատանքի արժանի է: Ան Աւետարանին՝ «աջ ձեռքով տուածդ ձախը պէտք չէ իմանայ» պատգամը լիարժէք գործադրող պարզ ու համեստ հոգի մըն է, հեռու ցուցամոլութենէ, եսասիրութենէ եւ շահամոլութենէ: Իսկապէս, Սազոն իր սրտին մէջ մարդկային բացառիկ որակներ կրող, թաքուն կարողութեանց հոգի մըն է: Անշուշտ, այդ կարողութիւնները կու գան հայ աւանդական ընտանիքի գաւակ ըլլալու իր արմատներէն. մայր երկրի, անոր ժողովուրդի հոգեկան ակունքներէն, կեանքի մարտահրաւէրները դիմակայելու միշտ պատրաստ անակուն, հաստատ կամքէն: Զինուած ցեղային այս ընտիր ժառանգութիւններով, հաւատարիմ իր էութեան, կասկած չունիմ, որ Սազոն պիտի շարունակէ վերելք-վերելք առաջնորդել «Երեւան» տպարան/հրատարակչատունը՝ առողջ, բարեխիղճ ու անսակարկ ոգիին ու պիզնեսին միացնելով մարդկայնական վեճ սկզբունքներով առաջնորդող իր ծառայութիւնները», եզրակացուց Ս. Մաճառեան: (Զերմ ծափահարութիւններ):

Ապա, Սազոնին եւ «Երեւան» տպարանի անձնակազմին ուղղուած շնորհակարարական եւ շնորհակալական ջերմ արտայայտութիւններով յաջորդաբար հանդէս եկան գրողներ, հասարակական դէմքեր, խմբագիրներ, արուեստագէտներ, հեռուստաժամերու հաղորդավարներ եւ միութիւններու ներկայացուցիչներ՝ Ներսէս Տէր Մեսրոպեան, Թորոս Բարսեղեան, Թորոս Բաթիստեան, Տիգրան Սարաֆեան, Վազգէն Վանատուր, Թոմիկ Ալեքսանեան, Յովհաննէս Բալայեան, Վիգէն Լազարեան, Արա Ահարոնեան, Սուրբիկ Լազարեան, Ռաֆիկ Համբարձումեան, բարեշնորհ Վահէ սրկ. Զարիթեան, Սոնա Տիգրանեան, Սիրլա Օհանեան, Նունէ Աւետիսեան, Սոնա Թոփալեան, Թամար Անէսեան, Մարաթ Հայրապետեան, Վարդան Կարապետեան

(Սազոնի հայ սքուլի դասընկերը), Անահիտ Ներսիսեան, Սվետլանա Տօնապետեան, Գէորգ Զաքմանեան (որ իր խօսքին միացուց ժողովրդական երգ մը), Յովհաննէս Բաբախանեան (որ արտասանեց նաեւ «Հայու հոգին» բանաստեղծութիւնը»), Արփի Արփաճեան (որ յայտնեց Մաշտոց գոլէճի տիկնանց յանձնախումբի շնորհակալութիւնը) եւ հուսկ՝ արժանապատիւ Տ. Մանուկ աւագ քահանայ Մարգարեան, որ Սփիւռքի նախարարութեան Յակոբ Մեղապարտի անուան մետալը յանձնելէ ետք Սարգիս Թոփալեանին, յայտնեց, թէ Հովիվուտի Վան Պողոտայի վրայ գտնուող Յովհաննու Կարապետ մայր եկեղեցիի նոր կառուցուելիք դրան վրայ որպէս բարերարներ, պիտի արձանագրուի Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Լուսինէ Թոփալեաններու անունը:

Բոլոր ելույթ ունեցողներուն խօսքերը դիմաւորուեցան ներկաներու բուռն ծափահարութիւններով: Ապա, դուրս. Տէր Եղիայեան յայտնեց, թէ այս առթիւ ստացուած են բազմաթիւ շնորհակարարներ, մետալներ, նամակներ՝ դաշնակցային, նահանգային, տեղական մարմիններէ, Սփիւռքի նախարարութենէն (Յակոբ Մեղապարտի մետալը): Այսպէս, շնորհակարարներ դրկած էին՝ ծերակուտական Տայէն Ֆայնրսթայն, գոնկրեսականներ՝ Էտիմ Շիֆ, Պրէտ Երմմըն եւ Պարպարա Պաքսըր, նահանգային ծերակուտական Քարոլ Լիու, էստիմպլիմէն եւ Գոնկրէսի թեկնածու Քաչօ Աչաճեան, Լոս Անճելէս Գաւառի վերակացու՝ Մայք Անթոնո-վիչ, Կլէնտէյլի քաղաքապետ՝ Արա Նաճարեան, Փաստիանայի քաղաքապետ՝ Թէրի Թըրնէք, Պըրպէնքի քաղաքապետ՝ Պապ Ֆրուիթըս, Հայց. Եկեղեցուց Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, «Համայնապատկեր» ամսագիրը, ԱՄՆ-ի հայ գրողներու միութիւնը, Լարաբաղի պատերազմի վետերաններու միութիւնը (Հայրենիքի պաշտպանութեան Ասպետաց Ասպետ շքանշանը) եւ Մաշտոց Գոլէճը:

Դուրս. Եղիայեանի ջերմ խօսքերով ամբիոն հրաւիրուելով, օրուան մեծարեալը՝ Սարգիս Թոփալեան յայտնապէս յուզուած, երեք կարճ այլ շատ խօսուն բառերու մէջ խտացուց իր զգացումները.

— Վա՛ռ... շնորհակալութիւն բերորիդ:

Աւարտին, տեղի ունեցաւ Lady Bug Catering-ի կողմէ պատրաստուած համադամ ու ճոխ պատուիկներով հիւրասիրութիւն:

Առանց չափազանցութեան կարելի է ըսել, որ Սարգիս Թոփալեանի տպագրական/հրատարակչական եւ «Երեւան» տպարանի հիմնադրեան 30-ամեակին նուիրուած այս հանդիսութիւնը, իր տեսակին մէջ եզակի տօնակատարութիւն մըն էր:

ՄԱՅԱԶԳ



ՏՕՔԹ. ՎԻԳԷՆ ԿԻԻԼՎԱՐԴԵԱՆ
(Ծննդալ Պէյրուսի՝ Յունիս 1956ին)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, գաւկիին, եղբօր, եւ հարազատին՝ Վիգէն Կիւլվարդեանի անակնկալ մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, Փետրուար 10, 2016ին:

Սգակիրներ՝ Կինը՝ Լիւսի Կիւլվարդեան
Զաւակները՝ Նար եւ Լար Կիւլվարդեան
Մայրը՝ Սոնիա Կիւլվարդեան
Քոյրը՝ Մանիա եւ Րապրէթ Արշակունի եւ զաւակները Նինա եւ Լիանա
Աները եւ զոքանչը՝ Սարգիս եւ Տիմիթրիա Սարգիսեան (Լիբանան)
Քենին՝ Սեդա Սարգիսեան եւ զաւակը Ժան-Փոլ (Լիբանան)
Աներորդին՝ Փոլ եւ Սուհա Սարգիսեան եւ զաւակները Թամար, Սագօ եւ Վահագն (Լիբանան)

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, Փետրուար 17, 2016, յետմիջօրէի ժամը 1ին, Հայաստանեայց Առաքելական Սբ. Պետրոս եկեղեցոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, CA 91406, ապա թաղման արարողութիւնը պիտի կատարուի Hollywood Hills Forest Lawn գերեմանատան մէջ:

Փոխան ծաղկեպակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել «Jinashian Memorial Program, c/o Dr. Vicken Gulvartian Memorial Fund, 381 Park Avenue South, Ste 617, New York, NY 10016-8806»-ին՝ կրթական նպատակներով:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Դեղագործ ՏՕՔԹ. ՎԻԳԷՆ ԿԻԻԼՎԱՐԴԵԱՆ-ի անակնկալ մահուն տխուր առթիւ, «Մասիս» շաբաթաթերթը իր ամբողջ շրջանակի անունով խորազգաց ցաւակցութիւններ կը յայտնէ հանգուցեալի աչրիին, զաւակներուն, մօրը, քրոջը եւ համայն ազգականներուն: «Մասիս» Շաբաթաթերթի խմբագրութիւն

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Նոր Սերունդ Մշակութային Միութեան բարեկամներէն ու քաջալերողներէն ՏՕՔԹ. ՎԻԳԷՆ ԿԻԻԼՎԱՐԴԵԱՆ-ի անակնկալ մահուն տխուր առթիւ, մեր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի աչրիին, զաւակներուն, մօրը, քրոջը եւ համայն ազգականներուն:

Նոր Սերունդ Մշակութային Միութեան Վարչութիւն

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿ ՀԱՃԻՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն եւ առ այդ հետեւեալ նուիրատուութիւնները կը կատարեն «Մասիս» շաբաթաթերթին:

- Սահարա ճաշարանի տէրեր Գրիգորեան եղբայրներ \$100
- Գալուստ եւ Լենա Տէրախէրեան \$100
- Վազգէն եւ Պերթա Թօփալեան \$50
- Էլի եւ Ազատուհի Թօփալեան \$50
- Զոհրապ եւ Անտիք Թօփալեան \$50

ԱՍԵՂՈՒ -ԱՍԻԴԱ- ԱՄԻԴ(ԴԻԱՐԲԵՔԻՐ)

Շաբաթուազուած էջ 16-էն

դից շատ հեռու հիւսիսի տարածքում քու արքայի Տիգրանակերտ ոստանն է, ինչու էս ուրիշ տեղ որոնում այն: Մոռացե՞լ էս քու նախնի Արմինի երկրի հօր արքայ Արգիշտիին, իր գրուած ասել էր, որ Մոպանի(Աղձնիք-Մոփք)երկրից 6000 հաւատարիմ մարդիկ էբերել Արինբերդ-էրէբունի ծայրամասային բնակավայրը պաշտպանելու

համար: Արքան հաւանաբար հաւատարիմ ասելով նկատի էր ունեցել ցեղային առնչութիւնները: Ժողովրդահանրապետական Կուսակցութեան իսթամպուլի երեսփոխան՝ Սելինա Տողանը, քիւրտերէ բաղկացած մի պատուիրակութեան կազմում, երկրի հարաւարեւելք էր գնացել, շփումներ ունեցել զանազան կազմակերպութիւնների հետ: Նա յիշեցուցեր էր, որ Դիարբեքիր-ի հայկական անու-

«ՅԵ՛Յ ԱՇԽԱՐՅ»

Շաբաթուազուած էջ 15-էն

չգայ, բժիշկները բան չեն կարող անել:

Մտածմունքի մէջ եմ ընկնում, պարսկաստան գնալու միտք եմ անում, սակայն նկատելով պայմանները եւ աշխատանքի պատասխանատուութիւնը, երկմտանքի մէջ եմ, սակայն եղբօրս եւ հարազատների մեծ շրջանակը յոյս էին, որ պէտք եղածը կ'անեն:

Կիրակի յուլիս 15 Վարդավառի տօնն է, հին ժամանակների հեթանոսական շրջանի տօներից, որ սերունդէ-սերունդ փոխանցուել է մեզ: Գլխիդէլի փողոցներում ոչ մի նշոյլ վարդավառից, նոր սերունդը ոչ մի գաղափար չունի այդ տօնից, որ իրար վրայ ջուր են շաղ տալիս եւ ուրախանում: Մի տարի այս տօնին Երեւանում էի, գրեթէ ամբողջ քաղաքի տարածքով երեխաները իրենց յանկարծակի դոյլթափոցներով թրջում էին պատահած մեծ ու պոփկին, մեծ խանդավառութիւն էր տիրում նրանց մօտ, քրքիջի էր դժգոհանքի արտայայտութիւնների տեղի տալով: Այս օրը մեր եկեղեցին նաեւ տօնում է Յիսուսի Այլակերպութեան կամ պայծառակերպութեան տօնը:

Ամառային տաք գիշեր է, մութը իր սեւ քօղը փռել է Գլխիդէլ քաղաքի վրայ: Կիրակնօրեայ արձակուրդի յոգնածութիւնից մարդիկ քաշուած են իրենց տները, ժամացոյցս գիշերույ ժամը 11-ն է ցոյց տալիս, համակարգչին դէմդիմաց ամփոփուած շարունակում եմ շարել մի քանի օրից սկսած նոր պատմութեամբ՝ «Մոռացուած պարտք»: Սենեակումս ոչ ոք կայ, երեխաները դուբլէքսի ննջասենեակներումն են, դրսից միայն հարեանի գովամղիչի ձայնն է մերթ ընդ մերթ գոռում, պատուհանը ծածկում եմ ձայնը չլսելու համար: Գրութեան ոգով տարուած մէկ մտածում եմ, մէկ շարում, մաքրում եմ, նոր բառ եւ նախադասութիւն աւելացնելով եւ այսպէս շարունակաբար, էս միջոցին հեռախօսն է կանչում իր անախորժ ձայնով, հետաքրքրուած թէ այս ուշ ժամին ով պիտի լինի, անմիջապէս միտքս գնում է դէպի Պարսկաստան մերոնց մօտ, գուցէ ուրախ լուր մամայի առողջութեան մասին, ընկալուչը վերցնում եմ եւ ձայն եմ տալիս.

- Ալլօ, ո՞վ է.
- Ռուբէն, Օննիկն եմ.
- Հա', ինչ է, մամից լաւ լուր պիտի տա՞ս.
- Եղբօրս ձայնը մէկէն կտրուում է, ապա ուզում է շարունակել, բայց անկարող հեկեկոցը լռեցնելու, տխուր լացող ձայնը մատնում է ամէն ինչ, փլոււմ եմ նաեւ էս.
- Ասա, տեսնեմ, մամայի մահը

(Շաբաթուազուած էջ 12)

ինչպէս պատահեց.

-Կիրակի յուլիս 15-ին առաւօտեան գնացել էի հիւանդանոց, նա գտնուած էր վերականգնացման բաժնում, ինձ ուղարկեցին բժշկի մօտ, բժիշկը ցաւով տեղեկացրեց մամայի մահը: Նա երեք գիշեր մնաց հիւանդանոցում առանց աչքերը բացելու, կարծես ամէն ինչից կշտացած էր, ամէն ինչից խռոված էր, միայն շնչում էր, մինչեւ վերջ էլ աչքերը փակուած մնացին, բժշկի ասութեամբ՝ մամայի համար փրկութիւն եղաւ:

Բժշկի խօսքը ինձ յիշեցրեց մամային, որ շարունակ Աստուծոյ խնդրում էր.

-Տէր Աստուած այնպէս մեռնեմ, որ ոչ ոքի չնեղացնեմ:

Այդպէս էլ եղաւ, հաւատքով ասուած խօսքը կատարուած է, մայրս արժանացաւ դրան:

Մայրս յարգալից եւ բարի էր հանդէպ իր շրջապատին, աշխատում էր սրտեր գրաւել եւ ձեռքից եկածը չխնայել, այդպէս էլ իր կեանքով, նա արեւ էր, մեր տան սիւնն էր, մամայի մահով մենք գրկուում ենք նրա հովանի ներկայութիւնից, նրա աղօթքներից ուղղուած առ Աստուած կիրակնամուտի եւ կիրակի օրերի եկեղեցական արարողութիւնների ընթացքում՝ զաւակների, հարսների եւ թոռների համար առողջութիւն եւ յաջողութիւն, իսկ աշխարհին խաղաղութիւն հայցելով, արդէն գրկուել էինք արու արծուի՝ հօր, հսկողութիւնից, հիմա էլ գրկուում ենք էգ արծուից:

Երկու եղբայրներ՝ մէկը պարսկաստանում, իսկ միւսը ԱՄՆ-ում հեռախօսի թելով իրար միացած թէ ձայնով եւ թէ սրտով, նրանք արցունք են թափում իրենց մեծ կորստի համար, իրենց սիրասուն մօր կորստի համար: Բոլոր մայրերն են սիրասուն, բոլոր մայրերն են արծիւ հովանի իրենց զաւակներին: Հէ՛ջ դուք սիրելիներ՛, եթէ ձեր մայրը ողջ է, նրան գուրգուրացէք, նրան փայփայցցէք, եթէ չանէք, մահից յետոյ շատ պիտի զղջաք ու ցաւէք:

Վերջապէս Օննիկը խաղաղուած շարունակում է.

-Թաղման արարողութեան համար ի՞նչ խորհուրդ ես տալիս.

-Այն ինչ մեր եկեղեցոյ կարգ ու կանոնն է կատարիր, ինչ ես մտածում իմ գալու մասին.

-Ես մենակ չեմ այստեղ, մեր հօրեղբօր տղաներն ու հարազատները կան, դրան էլ ունեմ, արդէն քանի ամիս առաջ այստեղ մամայի մօտ էի, քո գալը մեծ ծախսերի կը նայի, իմ կարծիքով լաւ է տարելիցի տապանաբարի օրհնանքի ժամանակ այստեղ լինես, նաեւ թող կապուեմ Նորիկի հետ նրա կարծիքը եւս իմանալու համար:

նը Տիգրանակերտ է: Վայնասուն թուրքիայում .. Սելինա Տողանի այդ յիշեցումը պատճառէր հանդիսացել, որոշմիայնինքը, այլնաեւ ամուսինը յարձակման ենթարկուէին: Վայրահաչ յօղուած էր հրապարակուել «Հալքըն Հապերճիսի» կազմէջի վրայ, ծանր ամբաստանութիւններ արել Սելինա Տողանի հասցէին, իրեն ու իր ամուսինը՝ «հայապաշտ» որակել, մեղադրել կուսակցացապետ Կըլըճտարօղլուն, նրա երեսփոխան ընտրուելը ապահովելու համար: Յօղուածագիրը նշել է, որ Տիգրա-

նակերտ անունին տալը փաստ էր, որ նա «հայապաշտ» է, որ Սելինան Հայկական Յեղասպանութիւնը ընդունած է, պնդած որ Հայաստանի հետ սահմանը բացուէր եւ որ նա իրեն Հայաստանի Խորհրդարանում է կարծում: «Հայ թերթ» կայքէջը իցատումն էր յայտնելով հարցրել Տիգրանակերտի անունը տալով Տիգրապաքըրը հայկական քաղաք պիտի դառնայ: Սելինա Տողանի հայկական ինքնութիւնն է պատճառ, որ այդ տեսանկիւնով նային երեսփոխանի հիւանալի աշխատանքին:

ՋԵՆՐԻԻ ՄԻՏԻԹԱՐԵԱՆԸ ՅԱՂԹԱՆԱԿ ԲԵՐԵՑ «ԲՈՐՈՒՍԻԱ»-ԻՆ

Հենրիխ Միտի-թարեանի խփած միակ կողմ օգնեց Դորտմունդի «Բորուսիային» տօնել հերթական յաղթանակը:



Գերմանիայի առաջնութեան 21-րդ տուրում դորտմունդցիները սեփական դաշտում ընդդուեցին մրցաշարի յետնապահ «Հանսուերին»: Խաղը չնայած անցաւ դաշտի տէրերի առաւելութեամբ, սակայն նրանց միայն մէկ անգամ յաջողուեց գրաւել մրցակցի դարպասը: Դա տեղի ունեցաւ 57-րդ րոպէին, երբ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպանը խաղադաշտի կեդրոնում ստանալով գնդակը, միայնակ կարողացաւ ճեղքել մրցակցի պաշտպանութիւնը եւ հեռահար հարուածով գրաւեց դարպասը՝ 1:0:

Այս յաղթանակից յետոյ «Բորուսիան» կրճատեց մրցաշարի միանձնեայ առաջատար «Բաւարիայի» հանդէպ եղած միաւորները տարբերութիւնը. այն այժմ կազմում է հինգ միաւոր:

ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՌԻՆԱՅԹԸՍԸ ՄՏԱԴԻՐ Է ՊՐԵՄԻԵՐ ԼԻԳԱՅԻ ՌԵԿՐՈՒՄԱՅԻՆ ՏՐԱՆՍԿԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ

Դորտմունդի «Բորուսիայի» յարձակուող Պիեր-էմերիկ Օբամէէնյանը յայտնուել է «Մանչեսթեր Եունայթեդսի» հետաքրքրութեան շրջանակում: Ինչպէս յայտնում է Daily Mail-ը, անգլիական ակումբը մտադիր է ամուսնու ձեռք բերել գաբոնցի ֆուտպոլիստին եւ նրա տրանսֆերի համար վճարել 70 միլիոն ֆունտ (90 միլիոն եւրո):



Ըստ թերթի տուեաների «Մանչեսթեր Եունայթեդսը» Օբամէէնյանից բացի դիտարկում է Ռոբերտ Լեւանդովսկու («Բաւարիա»), Նէյմարի («Բարսելոնա») եւ Գարեթ Բէյլի («Ռէալ») թեկնածութիւնները, սակայն ամենահաւանական տարբերակը համարում է «Բորուսիայի» յարձակուողին:

Նշում է, որ այս շաբաթ մանչեսթերցիները բաժնետերերի հանդիպման ժամանակ ակումբի փոխնախագահ էդ Վուդվորդը յայտարարել է, որ «կարծիր սատանները» գանձարանում առաջացել է պահեստային ֆոնդ, որը կազմում է 120 միլիոն ֆունտ: Այդ գումարը ակումբը մտադիր է ծախսել աստղային նորեկներ ձեռք բերելու շուրջ:

Գործարքի իրականացման դէպքում «Մանչեսթեր Եունայթեդը» Պրեմիեր լիգայի տրանսֆերային նոր ռեկորդ կը սահմանի: Անգլիական ակումբի կողմից ձեռք բերուած ամենաթանկ ֆուտպոլիստը համարում է Անխէլ Դի Մարիան, ում համար 2014 թուականի ամուսնը նոյն «Եունայթեդսը» 75 միլիոն եւրո էր վճարել «Ռէալին»:

ԼԻՈՆԵԼ ՄԵՍԻՆ ՎԵՐՉԱՊԵՍ ԾԱՆԱԶՈՒԵԼ Է ԼԱԲԱԳՈՅՆ

Աշխարհի ռեժերգոյն ֆուտպոլիստ Լիոնէլ Մեսին վերջապէս ճանաչուել է ամսուայ լաւագոյն խաղացող:



Սպանիայի ֆուտպոլի լիգան «Բարսելոնայի» արգենտինացի յարձակուողին հռչակել է 2016 թուականի Յունուար ամսուայ լաւագոյն խաղացող:

Պարգևում է, որ մինչ այդ, Լիոնէլ Մեսին ոչ մի անգամ էլ արժանացել անհատական այդ մրցանակին: Աւելին, «Բարսելոնայի» ֆուտպոլիստներից առաջին անգամ ամսուայ լաւագոյն խաղացող էր ճանաչուել պրագիլացի Նէյմարը՝ 2015 թուականի Նոյեմբերին:

Նշենք, որ Սպանիայի ֆուտպոլի լիգան սոյն մրցանակը սահմանել է 2013 թուականին:

«ՌԵԱԼՈՒՍ» ՓՆՏՈՒՄ ԵՆ ԴԱԲԱՃԱՆԻ

Մադրիդի «Ռէալը» փորձում է գտնել այն մարդուն, որը լրատուամիջոցներին էր փոխանցել ռեկուսի Գարեթ Բէյլի եւ գերմանացի Տոնի Կրոսի պայմանագրերում նշուած թուերն ու «Մանչեսթեր Եունայթեդսի» սպանացի դարպասապահ Դաւիդ Դէ Խիայի ձախողուած տրանսֆերի մանրամասները, գրում է El Mundo Deportivo-ն:

Վերջերս Football Leaks-ը հրապարակել էր ֆուտպոլիստների եւ

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆ. «ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏԻԱՆԵՐՈՒՄ ԶԵՍ ԱՐԹՆԱՆՈՒՄ»

Լեւոն Արոնեանը մեկնաբանել է Շուէյցարիայի Յիւլ-րիխ քաղաքում ընթացող Zurich Chess Challenge շախմատային սուպերմրցաշարի առաջին տուրում աշխարհի նախկին ախոյեան, հնդիկ Վիշվանաթան Անանդից սեւերով 19-րդ քայլում կրած պարտութիւնը:



« Ա ո ա ջ ի ն պարտիաներում ինձ մօտ յաճախ է այդպէս պատահում: Դեռ պատրաստ չեմ լինում պայքարել, չեմ արթնանում: Ես միշտ ձգտում եմ պայքարել դրա դէմ, բայց երբեմն չի ստացւում: Կրամնիկի հետ երկրորդ պարտիայում աւելի հետաքրքիր էր: 40+10 րոպէ ժամանակահաշուարկը նորմալ է: Փորձում էինք փնտռել գաղափարներ: Եթէ աւելի շատ ժամանակ լինէր, չեմ կարծում, որ աւելի լաւ կը խաղայինք, հետաքրքիր էր»,- Լեւոն Արոնեանի խօսքը մէջբերում է chess-news-ը:

Երկրորդ տուրում Արոնեանը սեւերով ոչ ոքի է խաղացել աշխարհի նախկին ախոյեան, ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկի հետ:

Փետրուարի 14-ին հայ գրոսմայստերը սպիտակներով խաղում է հոլանտացի Անիշ Գիբրիի հետ, սեւերով կը հանդիպի Սպանիան ներկայացնող Ալեքսէյ Շիրովին:

ՄՕԿ ՆԱԽԱԳԱՅ. «ԴԵՌ ՈՉ ՄԻ ԱՕԿ ՉԻ ՀՐԱԺԱՐՈՒԵԼ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՌԻՕ-2016-ԻՆ»

Դեռ ոչ մի երկրի ազգային օլիմպիական կոմիտէ չի յայտարարել, որ ցանկանում է բաց թողնել 2016թ. Ռիոյի ամառային Օլիմպիական խաղերը «Զիկա» վարակի պատճառով, ասել է Միջազգային օլիմպիական կոմիտէի նախագահ, գերմանացի Թոմաս Բախը:



ԱՄՆ-ի, Աւստրալիայի, Մեծ Բրիտանիայի, Քենիայի, Ճապոնիայի ԱՕԿ-ները մարզաձեւերի ֆեդերացիաներին թոյլատրել են ցանկութեան դէպքում հրաժարուել մասնակցութիւնից:

«Պրագիլիայում Օգոստոսին ձմեռ է, կը լինի այլ իրավիճակ: Վստահ ենք, որ Պրագիլիայի կառավարութեան, Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան ջանքերով Խաղերի մասնակիցների եւ հիւրերի առողջութիւնը վտանգի չի ենթարկուի»,- Բախի խօսքը մեջբերում է ESPN-ը:

Պրագիլիայի գրեթէ բոլոր նահանգներում այժմ «Զիկայի» համաճարակ է: Հիմնական տարածիչները մոծակներն են: Հիւանդութիւնը բուժուած է, մահացութեան դէպքեր գրեթէ չեն գրանցուած:

Ռիոյի Օլիմպիական խաղերն Օգոստոսի 5-21-ն է:

GOAL.COM. «ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻ» ՊԱՏՄՈՒԹԵԱՆ 20 ԼԱԲԱԳՈՅՆ ՖՈՒՏՊՈԼԻՍՏՆԵՐԸ

Goal.com-ը ներկայացրել է «Բարսելոնայի» բոլոր ժամանակների 20 լաւագոյն ֆուտպոլիստների իր տարբերակը: Յուցակը գլխաւորում է Արգենտինայի հաւաքականի յարձակուող Լիոնէլ Մէսին, որին յաջորդում են սպանացի Չաւին ու հունգարացի Լադիսլաւ Կուբալան:

1. Լիոնէլ Մէսի (2004-ի մինչեւ այսօր)
2. Չաւի Հերնանդէս (1998-2015)
3. Լադիսլաւ Կուբալա (1950-1962)
4. Անդրէս Ինյեստա (2003-ից մինչեւ այսօր)
5. Խոսեպ Գալարչիոլա (1990-2001)
6. Կարլէս Պուլյոլ (1999-2014)
7. Յոսէան Կրոյֆ (1973-1978)
8. Ռոնալդ Կուման (1989-1995)
9. Խոսեպ Սամպայէր (1918-1933)
10. Ռոնալդինիո (2003-2008)
11. Սերխիօ Բուսկետս (2008-ի մինչեւ այսօր)
12. Միգէլ (1973-1989)
13. Խրիստո Ստոիչկով (1990-1998)
14. Սեսար Ռոզրիգէս (1942-1955)
15. Միքայէլ Լաուդերուպ (1989-1994)

«Ռէալի» միջեւ պայմանագրերում նշուած տեղակատուութիւնը: Արքայական ակումբի նախագահ Ֆլորենտինօ Պերեսը խիստ զայրացած ու անհանգստացած է միջադէպի կապակցութեամբ: «Ռէալի» ղեկավարութիւնը կարծում է, որ այդ տեղակատուութիւնը լրատուամիջոցներին տրամադրել է ակումբի անդամներից մէկը: